

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՖԻԶԻԿԱ-ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԵՎ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

010600-«ՖԻԶԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
սովորող ուսանողների համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| ՆԱԽԱԲԱՆ | 3 |
| ՄԱՍ I. ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ | 4 |
| 1. Կրեղիտային համակարգի հիմնադրույթները | 4 |
| 2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և բակալավրական ծրագրի աշխատանքային ծավալը | 5 |
| 3. Դասընթացները և կրթական մոդուլները | 6 |
| 4. Բակալավրի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները | 7 |
| 4.1. Ուսումնական ծրագիրը | 7 |
| 4.1.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս | 8 |
| 4.1.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս | 9 |
| 4.1.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս | 10 |
| 4.1.4. Հատուկ մասնագիտական կրթամաս | 11 |
| 4.1.5. Ընդհանուր առողջապահական կրթամաս | 12 |
| 4.1.6. Կրթական այլ մոդուլներ | 12 |
| 4.2. Ավարտական պահանջներ | 13 |
| 4.2.1. Ընդհանուր ավարտական պահանջներ | 13 |
| 4.2.2. Մասնագիտական ավարտական պահանջներ | 13 |
| 5. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը | 13 |
| 5.1. Համակարգի հիմնադրույթները | 13 |
| 5.2. Գնահատման մեթոդաբանությունը | 14 |
| 5.3. Կիրարկման ընթացակարգը | 18 |
| 5.4. Գնահատման սանդղակը և նշագրումը | 19 |
| 6. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը | 20 |
| 7. Ուսման առաջադիմությունը | 22 |
| 8. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը | 23 |
| 9. Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը | 24 |
| 10. Կրեղիտների փոխանցումը | 25 |
| 11. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը | 26 |
| 12. Ուսանողի իրավունքներն ու պարտականություններ | 26 |
| 13. ՎՊՄԻ ուսումնական օրացույցը | 27 |
| ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ | 28 |
| 1. Տեղեկագրքի նպատակը | 28 |
| 2. 010600 «Ֆիզիկա» մասնագիտության տեղեկագիրք | 29 |
| 2.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս | 29 |
| 2.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս | 41 |
| 2.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս | 54 |
| 2.4. Հատուկ մասնագիտական կրթամաս | 64 |
| 2.5. Ընդհանուր առողջապահական դասընթացներ | 70 |
| 2.6. Այլ բաղադրիչներ | 73 |

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ուսանողներ

Ինչպես հայտնի է, Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները (այդ թվում նաև ՎՊՄԻ-ն) ներգրավվել են Բոլոնյան գործընթացի մեջ, որը նպատակ ունի ստեղծելու եվրոպական միասնական բարձրագույն կրթական տարածք: Այս գործընթացի շրջանակներում ՎՊՄԻ-ն արդեն երկու տարի լայնածավալ բարեփոխումներ է սկսել իր կրթական համակարգում: Բուհում իրականացվող բարեփոխումները միտված են ուսուցման արդյունավետ կազմակերպմանը, կրթության որակի բարձրացմանը, վերջինիս համապատասխանեցմանը եվրոպական կրթական չափանիշներին: Անցումը կրեդիտային համակարգին ուսումնական գործընթացը և նրա արդյունքները դարձնում է ավելի արդյունավետ, շարժուն, մատչելի ու ընթեռնելի, ինչը մոտ ապագայում հնարավորություն կտա ձեզ ուսումը շարունակելու եվրոպական բուհերում և մուտք գործելու գլոբալ աշխատաշուկա:

Անցում է կատարվել ուսանողակենտրոն ուսուցման, որը լավագույնս արտահայտում է ուսանողության շահերը: Շարունակաբար կատարելագործվում են կրթական ծրագրերն ու ուսումնական պլանները և ուսանողին հնարավորություն է ընձեռվում անձամբ մասնակցելու իր ուսումնական պլանների կազմման գործընթացին և ինքնուրույն կազմակերպելու իր ուսման հետազիծը՝ այսպիսով դառնալով ուսման գործընթացի արդյունքը ձևավորող ակտիվ մասնակից: Բուհում իրականացվող ուսուցման երկաստիճան համակարգը (բակալավրիատ, մագիստրատուրա) հիմնավորված կերպով թեթևացրել է ուսանողի լսարանային ծանրաբեռնվածությունը՝ մեծ տեղ հատկացնելով ուսանողի ինքնուրույն ու ստեղծագործ աշխատանքին: Մասնագիտական պարտադիր առարկաներին զուգընթաց՝ ուսանողը հնարավորություն ունի, ըստ նախասիրությունների, ընտրելու այլ առարկաներ:

Բարեփոխումների այս շղթան շարունակական բնույթ է կրելու, և տարեցտարի մեր ուսանողության համար ստեղծվելու են ուսումնական գործընթացի առավել շահավետ պայմաններ և ընտրության ավելի լայն հնարավորություններ:

Սույն ուղեցույցը կօգնի ձեզ պատկերացում կազմելու կրեդիտային համակարգի հիմնադրույթների և ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ, ծանոթանալու գիտելիքների ստուգման ու գնահատման համակարգին, ձեզ առաջարկվող կրթական ծրագրերին, դրանց կառուցվածքին ու բովանդակությանը, աշխատածավալներին ու ծրագրի բաղկացուցիչ դասընթացներին և դրանցով պայմանավորված կրթական արդյունքներին:

Մաղթում են արդյունավետ ուսումնառություն և ամենայն բարիք:

Ռեկտոր՝

Գ. Խաչատրյան

ՄԱՍ 1. ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Կրեղիտային համակարգի հիմնադրույթները

Կրեղիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեղիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեղիտների անհրաժեշտ քանակի և բովանդակության ձեռքբերումից հետո:

Կրեղիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեղիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական ծանրաբեռնվածությունը մեկ ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեղիտ: Այն նախատեսված է եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեղիտների անհրաժեշտ քանակը,
 - կրեղիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
1. կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեղիտները, դասավանդման և գնահատման մեթոդները և այլ տեղեկատվություններ, հրապարակվում են վաղօրոք (տպագրվում և/կամ տեղադրվում են ՎՊՄԻ կայքէջում):

Ակադեմիական կրեղիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման համընդունելի պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

Ակադեմիական ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային և արտալսարանային (նաև ինքնուրույն իրականացվող) բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանց հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
- *Լսարանային բեռնվածություն*- ուսումնական աշխատաժամանակի բաղադրիչ, որն ընդգրկում է ուսումնառության կազմակերպման լսարանային ձևերի բոլոր տեսակները՝ դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ:
- *Արտալսարանային բեռնվածություն* - ուսանողի կողմից ինքնուրույն կամ դասախոսի հսկողությամբ կատարվող աշխատանքի համար հատկացվող ժամանակ՝ հանձնարարված գրականությունն ուսումնասիրելու և մշակելու, գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքներին, ընթացիկ և կիսամյակային քննություններին նախապատրաստվելու, կուրսային, դիպլոմային աշխատանքները կատարելու համար:
- կրեդիտը չափում է ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը ուսանողին հատկացվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի փոխարինում թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործություն չկա:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և բակալավրական ծրագրի աշխատանքային ծավալը

1. ՎՊՄԻ-ում բակալավրի կրթական աստիճանում առկա ուսուցմամբ ուսանողի ուսումնական կիսամյակի բեռնվածությունը սահմանվում է 30 կրեդիտային

- միավոր, ուսումնական տարվա բեռնվածությունը՝ 60 կրեդիտային միավոր (տարեկան ուսումնական բեռնվածությունը՝ 1800 ակադեմիական ժամ):
2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտա-լսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
 3. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածությունը գնահատվում է 1,5 կրեդիտային միավորով, ինչը կազմում է 45 ակադեմիական ժամ(40 ընդհանուր և 5 շաբաթական պարապմունքների դեպքում՝ 51 ակադեմիական ժամ):
 4. Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով (աշնանային և գարնանային): Ուսումնական կիսամյակի տևողությունը կազմում է 20 շաբաթ, որից՝ տեսական ուսուցում՝ 17 շաբաթ, քննաշրջան՝ 3 շաբաթ (անհրաժեշտության դեպքում՝ ևս 2 օր), բացի ուսումնառության 7-րդ և 8-րդ կիսամյակներից, որոնց տևողությունը 17 շաբաթ է (12 շաբաթ՝ տեսական ուսուցում, 4 շաբաթ՝ արտադրական պրակտիկա, 2 շաբաթ՝ քննաշրջան):
 5. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 23-26 ժամ (առանց ֆիզդաստիարակության ժամերի):
 6. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:
 7. Ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողը որոշ դեպքերում սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ բեռնվածություն:
 8. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը կազմում է 240 կրեդիտային միավոր:

3. Դասընթացները և կրթական մոդուլները

1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կան կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով:
2. Մեծածավալ դասընթացները բաժանվում են մեկ կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:
3. Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց յուրացման բնույթով բաժանվում են երեք հիմնական խմբի՝
 - ա) *պարտադիր դասընթացներ* - բարձրագույն կրթության կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրի հիմնական դասընթացներ (կրթական մոդուլներ), որոնք յուրացվում են պարտադիր և խիստ որոշակի

հերթականությամբ՝ համաձայն տվյալ ուղղության մասնագետների պատրաստմանը ներկայացվող պահանջներին:

բ) *պարտադիր ընտրովի դասընթացներ* - որոնց յուրացման հերթականությունը ընտրում է ուսանողը՝ պահպանելով դրանց նախապայմանները:

գ) *ընտրովի դասընթացներ* - պետական չափորոշիչներից բխող և ֆակուլտետների կողմից առաջարկվող դասընթացներ, որոնք ընտրում է ուսանողը առաջարկվող ցանկից, իսկ դրանց անցկացման հաջորդականությունը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

4. Բակալավրի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

4.1. Ուսումնական ծրագիրը

Բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է վեց հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական(ՅՍՏ), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական(ԸՄԲ), ընդհանուր մասնագիտական(ԸՄԴ) և հատուկ մասնագիտացման դասընթացներ(ՅՄԴ), ընդհանուր առողջապահական(ԸԱ), ինչպես նաև կրթական այլ բաղադրիչներ(ԱԲ): Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր դասընթաց ունի իր դասիչը: Ծրագրում նշվում է նաև դասընթացների յուրաքանչյուր խմբին հատկացված կրեդիտային միավորների գումարը, ինչպես նաև դասընթացի յուրաքանչյուր մոդուլին հատկացված կրեդիտային միավորը: Նշվում է նաև առարկայի դասավանդման կիսամյակը և նախապայմանները:

Ուսումնական ծրագրի ընդհանուր կառուցվածքը հետևյալն է.

| Կրթամաս | Կրեդիտներ | Դասընթաց-մոդուլների քանակը |
|---|------------|----------------------------|
| Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական | 37 | 10 |
| <i>պարտադիր կամ ընտրական</i> | <i>31</i> | <i>7</i> |
| | <i>6</i> | <i>3</i> |
| Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական | 26 | 8 |
| <i>պարտադիր կամ ընտրական</i> | <i>21</i> | <i>7</i> |
| | <i>5</i> | <i>1</i> |
| Ընդհանուր մասնագիտական դասընթացներ | 116 | 23 |
| <i>պարտադիր կամ ընտրական</i> | <i>112</i> | <i>21</i> |
| | <i>4</i> | <i>2</i> |
| Մասնագիտական դասընթացներ | 37 | 9 |
| <i>պարտադիր կամ ընտրական</i> | <i>35</i> | <i>8</i> |
| | <i>2</i> | <i>1</i> |
| Կրթական այլ մոդուլներ | 24 | 3 |

| | | |
|----------|-----|----|
| ԸՆԴԱՄԵՆԸ | 240 | 53 |
|----------|-----|----|

4.1.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

Բակալավրի ուսումնական ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՋՍՏ) կրթամասը կազմված է կրթական մոդուլների երկու փաթեթից՝ պարտադիր և կամընտրական, որոնք նպատակաուղղված են բարձրագույն կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

ՋՍՏ պարտադիր դասընթացներ

ՋՍՏ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլ-դասընթացները.

| Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/ս/գ/լ) ¹ | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|--|--------|---------------------------------------|-------------|---------------|
| Չայոց պատմության հիմնահարցեր | 2 | 24 (16/ 8/0/ 0) | 1 | ստուգարք |
| Չայոց պատմության հիմնահարցեր | 2 | 24 (16/ 8/0/ 0) | 2 | ստուգարք |
| Չայոց լեզու և գրականություն | 2 | 32 (0/ 0/32/ 0) | 1 | ստուգարք |
| Չայոց լեզու և գրականություն | 2 | 32 (0/ 0/32/ 0) | 2 | ստուգարք |
| Մասնագիտական ռուսաց լեզու | 2 | 32 (0/0/32/ 0) | 1 | ստուգարք |
| Մասնագիտական ռուսաց լեզու | 2 | 32 (0/0/32/ 0) | 2 | ստուգարք |
| Մասնագիտական ռուսաց լեզու | 2 | 32 (0/0/32/ 0) | 3 | ստուգարք |
| Մասնագիտական ռուսաց լեզու | 2 | 32 (0/0/32/ 0) | 4 | ստուգարք |
| Մասնագիտական օտար լեզու | 2 | 32 (0/0/32/ 0) | 1 | ստուգարք |
| Մասնագիտական օտար լեզու | 2 | 32 (0/0/32/ 0) | 2 | ստուգարք |
| Մասնագիտական օտար լեզու | 2 | 32 (0/0/32/ 0) | 3 | ստուգարք |
| Մասնագիտական օտար լեզու | 2 | 32 (0/0/32/ 0) | 4 | ստուգարք |
| Փրլիսոփայություն | 4 | 48 (32/16/0/ 0) | 5 | քննություն |
| Մարմնակրթություն | - | 192 (0/0 /192/0) | 1,2,3,4,5,6 | ստուգարք |
| Բուհական բաղադրիչ | | | | |
| Տնտեսագիտության հիմունքներ | 3 | 40 (24/16/0/ 0) | 3 | ստուգարք |
| Կամընտրական դասընթացներ | | | | |
| Քաղաքագիտություն | 2 | 24 (16 /8 /0/0) | 4 | Ստուգարք |
| Իրավագիտություն | | | | |
| Քաղաքական պատմություն | | | | |
| Մշակութաբանություն | 2 | 24 (16 /8 /0/ 0) | 6 | ստուգարք |
| Չամաշխարհային մշակույթի տեսություն և պատմություն | | | | |
| Չայ մշակույթ | | | | |
| Կրթության սոցիոլոգիա | 2 | 24 (16 /8 / 0/0) | 7 | ստուգարք |
| Սոցիոլոգիա | | | | |

1) դ-դասախոսություն, ս-սեմինար, գ-գործնական պարապմունք, Լ-լաբորատոր աշխատանք

2) Անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն

ՋՍՏ կամընտրական դասընթացներ

ՋՍՏ կամընտրական դասընթացների ցանկը կազմված է բուհական բաղադրիչից և կամընտրական առարկաներից: Բուհական բաղադրիչը (որը կարող է փոփոխվել) առաջարկվում է բուհի գիտխորհրդի կողմից, իսկ կամընտրական

առարկաները՝ ֆակուլտետի խորհրդի կողմից, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը: ՀՍՏ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է հետևյալ մոդուլները.

4.1.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

Բակալավրի ուսումնական ծրագրի ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ) կրթամասը նույնպես կազմված է կրթական մոդուլների երկու փաթեթից՝ պարտադիր և կամընտրական:

ԸՄԲ պարտադիր դասընթացներ

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

| Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/ս/գ/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|--------|--------------------------|-------------|-------------------|
| <i>Ինֆորմատիկա</i> | 5 | 60 (30 /0/0/30) | 1 | <i>քննություն</i> |
| <i>Ծրագրավորման լեզուներ</i> | 2 | 30 (16 /0 / 0/14) | 2 | <i>ստուգարք</i> |
| <i>Ծրագրավորման լեզուներ</i> | 3 | 40 (16 /0 / 0/24) | 3 | <i>ստուգարք</i> |
| <i>Աստղագիտություն</i> | 4 | 54 (30 /0/12/12) | 8 | <i>քննություն</i> |
| <i>Տարիքային ֆիզիոլոգիա</i> | 2 | 24 (16/0 / 0/8) | 2 | <i>ստուգարք</i> |
| <i>Էկոլոգիա և բնապ. հիմունքներ</i> | 2 | 24 (16 /8 /0 /0) | 3 | <i>ստուգարք</i> |
| Բուհական բաղադրիչ | | | | |
| <i>Քաղաքաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր</i> | 3 | 40 (16/0/24/ 0) | 4 | <i>ստուգարք</i> |
| Կամընտրական դասընթացներ | | | | |
| <i>Համակարգչի կիրառ. ուս. պրոցեսում</i> | 2 | 32 (0 /0 /0/32) | 6 | <i>ստուգարք</i> |
| <i>Բժշկագիտություն և առողջության պահպանում</i> | 3 | 40 (16/0/16/8) | 3 | <i>ստուգարք</i> |
| <i>Արտ. իրավիճ.առաջին բուժ. օգն.</i> | | | | |
| <i>Մարմնակրթություն</i> | - | 256(0/0/272/ 0) | 1,2,3,4,5,6 | <i>ստուգարք</i> |

ԸՄԲ կամընտրական դասընթացներ

ԸՄԲ կրթամասի կամընտրական դասընթացների ցանկը նույնպես կազմված է բուհական բաղադրիչից և կամընտրական առարկաներից և ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

4.1.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս

«Ֆիզիկա» մասնագիտության բակալավրի ուսումնառության կրթական ծրագրի ԸՄԴ կրթամասը բաղկացած է կրթական մոդուլների երկու փաթեթից՝ ընդհանուր և տեսական ֆիզիկայի պարտադիր մասերից և կամընտրական առարկաներից:

ԸՄԴ պարտադիր դասընթացներ

ԸՄԴ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

| Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/ս/զ/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|--|--------|--------------------------|----------|---------------|
| Մաթեմատիկական անալիզ | 7 | 88 (40 /0/ 48/ 0) | 1 | քննություն |
| Մաթեմատիկական անալիզ | 7 | 88 (40 /0/ 48/ 0) | 2 | քննություն |
| Մաթեմատիկական անալիզ | 5 | 64 (24 /0/ 40/ 0) | 3 | քննություն |
| Վերլուծ. երկր. և գծ. հանրահաշիվ | 3 | 40 (16 /0/ 24/ 0) | 1 | ստուգարք |
| Վերլուծ. երկր. և գծ. հանրահաշիվ | 4 | 48 (24/0/ 24/ 0) | 2 | քննություն |
| Դիֆ. և ինտեգրալ հավասարումներ | 5 | 60 (30 /0/ 30/ 0) | 3 | քննություն |
| Մաթ. ֆիզ. հավասարումներ | 5 | 60 (30 /0/30/ 0) | 7 | քննություն |
| Կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաներ | 3 | 40 (16 /0/ 24/ 0) | 4 | ստուգարք |
| Հավանականությունների տես. և մաթ. վիճակագրություն | 3 | 48 (16 /0/ 32/ 0) | 5 | ստուգարք |
| Ընդհանուր ֆիզիկա | | | | |
| Սեխանիկայի ֆիզ. հիմունքներ | 7 | 96 (32/0/32/32) | 1 | քննություն |
| Էլեկտրականություն և մագնիսականություն | 7 | 96 (32/0/32/32) | 2 | քննություն |
| Օպտիկական երևույթների ֆիզիկա | 7 | 96 (32/0/32/32) | 3 | քննություն |
| Մոլեկուլային ֆիզիկա | 7 | 96 (32/0/32/32) | 4 | քննություն |
| Ատոմային ֆիզիկա | 5 | 72 (32/0 /24/ 16) | 5 | քննություն |
| Ատոմի միջուկի և տարրական մասնիկների ֆիզիկա | 5 | 72 (32/0 /24/ 16)) | 6 | քննություն |
| Տեսական ֆիզիկա | | | | |
| Դասական մեխանիկա | 6 | 80 (32/0/48/ 0) | 4 | քննություն |
| Դասական էլեկտրադինամիկա | 6 | 80 (32/0/48/ 0) | 5 | քննություն |
| Քվանտային մեխանիկա | 6 | 80 (32/0/48/ 0) | 6 | քննություն |
| Թերմոդ. և վիճակագր. ֆիզ. | 6 | 72 (32/0/40/ 0) | 7 | քննություն |
| Ֆիզ. պրոց. և գիտափորձ. մոդել. | 5 | 72 (24/0/0/48) | 8 | քննություն |
| Բուհական բաղադրիչ | | | | |
| Ռադիո և միկրոէլեկտրոնիկա | 3 | 36 (24 /0/0/12) | 7 | ստուգարք |
| Կամընտրական դասընթաց | | | | |
| Համակ. էքսպ. ֆիզիկայում | 2 | 24 (0/0/0/24) | 6 | ստուգարք |
| Կիրառ. խնդ. լուծ. համակ. | 2 | 24 (0/0/24/0) | 7 | ստուգարք |

ԸՄԴ կամընտրական դասընթացներ

ԸՄԴ կրթամասի կամընտրական դասընթացների ցանկը բաղկացած է բուհական բաղադրիչից և կամընտրական առարկաներից և ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

4.1.4 Մասնագիտական կրթամաս

«Ֆիզիկա» մասնագիտության բակալավրի ուսումնառության կրթական ծրագրի մասնագիտական կրթամասը պայմանավորված է շրջանավարտի «մանկավարժության բակալավր» որակավորումով և բաղկացած է կրթական մոդուլների երկու փաթեթից՝ պարտադիր և կամընտրական առարկաներից:

ՄԿ պարտադիր դասընթացներ

ՄԿ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է մանկավարժական բնույթի ամրագրված բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

| Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/ս/զ/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|------------------------------------|--------|--------------------------|----------|---------------|
| <i>Հոգեբանություն</i> | 5 | 62 (34/30 /0/ 0) | 4 | քննություն |
| <i>Տարիքային և մանկ. հոգեբ.</i> | 2 | 26 (16/10 /0/ 0) | 5 | ստուգարք |
| <i>Մանկավարժություն</i> | 5 | 62 (34/30 /0/ 0) | 5 | քննություն |
| <i>Մանկավարժության պատմություն</i> | 2 | 26 (16/10 /0/ 0) | 6 | ստուգարք |
| <i>Ֆիզ. դասավանդ. մեթոդիկա</i> | 6 | 96 (32 /0 /32/32) | 6 | քննություն |
| <i>Ֆիզիկայի պատմություն</i> | 3 | 42 (30 /12/ 0/ 0) | 8 | ստուգարք |
| <i>Ֆիզ. խնդ. լուծ. պրակտիկում</i> | 2 | 32 (0/0 /32/ 0) | 5 | ստուգարք |
| <i>Ֆիզ. խնդ. լուծ. պրակտիկում</i> | 2 | 32 (0/0 /32/ 0) | 6 | ստուգարք |
| <i>Ֆիզ. խնդ. լուծ. պրակտիկում</i> | 2 | 24 (0/0 /24/ 0) | 7 | ստուգարք |
| <i>Ֆիզ. խնդ. լուծ. պրակտիկում</i> | 2 | 36(0/0 /36/ 0) | 8 | ստուգարք |

ՄԿ կամընտրական դասընթացներ

ՄԿ կրթամասի կամընտրական դասընթացների ցանկը բաղկացած է բուհական բաղադրիչից և կամընտրական առարկաներից և ներառում է կրեդիտներով հաշվարկված հետևյալ մոդուլները.

| Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/ս/զ/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|--------------------------------------|--------|--------------------------|----------|---------------|
| Բուհական բաղադրիչ | | | | |
| <i>Ընտ. դաս. ֆիզ.դաս.մեթոդիկայից</i> | 2 | 24 (16/0/8/ 0) | 7 | ստուգարք |
| <i>Հատուկ մասնագիտական սեմինար</i> | 4 | 84 (0/84/0/0) | 7,8 | ստուգարք |
| Կամընտրական դասընթացներ | | | | |
| <i>Ֆիզ.դաս.մեթոդիկայից</i> | 2 | 24 (12 /0/12/0) | 7 | ստուգարք |

4.1.5. Կրթական այլ մոդուլներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքներով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

| Սողուլ | Կրեդիտ | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|--------|----------|---------------|
| Կուրսային աշխատանք | 6 | 5,6 | գնահատական |
| Արտադրական պրակտիկա | 12 | 7, 8 | ստուգարք |
| Անփոփիչ ատեստավորման քննություն | 3 | - | քննություն |
| Բակալավրի ավարտական աշխատանքի նախապատրաստում և պաշտպանություն | 3 | - | գնահատական |

4.2. Ավարտական պահանջները

4.2.1. Ընդհանուր ավարտական պահանջներ

1. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ՎՊՄԻ ուսանողը պետք է հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (ներառյալ կուրսային աշխատանքները և պրակտիկաները), որոնց համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 58` ներառյալ 3 կրեդիտ արժեքով մասնագիտական ամփոփիչ քննությունը և 7 կրեդիտ արժեքով ավարտական աշխատանքը:

2. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն 37 կրեդիտ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում` 6 կրեդիտ` կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 26 կրեդիտ` մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից (ներառյալ 5 կրեդիտ` կամընտրական դասընթացների ցանկից), 37 կրեդիտ` մասնագիտական կրթամաս` ներառյալ 2 կրեդիտ` կամընտրական դասընթացից, 6 կրեդիտ` կուրսային աշխատանք և 18 կրեդիտ` պրակտիկայից ու եզրափակիչ ատեստավորման ձևերից:

4.2.2. Մասնագիտական ավարտական պահանջներ

Մնացած 153 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է` ելնելով «Ֆիզիկա» մասնագիտությամբ մանկավարժության բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով և սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, որը լրացվում է ընդհանուր մասնագիտական կրթամասի (տես կետ 4.1.3.) և հատուկ մասնագիտական կրթամասի (տես կետ 4.1.4.) առաջարկվող առարկայացանկերով:

5. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

5.1. Համակարգի հիմնադրույթները

1. ՎՊՄԻ–ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրակման հիմնական նպատակներն են՝
 - ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և բարելավել դասահաճախումները,
 - բ) անհատական առաջադրանքների և ընթացիկ ստուգումների (քննությունների) օգնությամբ բարելավել դասընթացի արդյունարար գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը՝ գիտելիքների գնահատման ընթացքում հաշվի առնելով ուսումնական գործընթացի մի շարք բաղադրիչների և դրանց կարևորության աստիճանը:
2. Գիտելիքների ստուգումը և գնահատումը պարունակում են հետևյալ բաղադրիչները՝
 - ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,
 - բ) Ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) հաշվառում և գնահատում,
 - գ) Գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության, պարապմունքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում,
 - դ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգումներ),
 - ե) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում,
 - զ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, անհատական առաջադրանքների, գործնական(սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցության, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (կրթական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

5.2. Գնահատման մեթոդաբանությունը

5.2.1 Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (կրթական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

ա) եզրափակիչ գնահատումով դասընթացներ,

բ) առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ:

Եզրափակիչ գնահատումով (քննությամբ) են ավարտվում ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կրթամասների այն դասընթաց-մոդուլները, որոնց լսարանային ժամաքանակը կիսամյակում կազմում է առնվազն 51 ժամ (որից առնվազն 34 ժամը դասախոսություն է): Այս կրթամասերի մնացած բոլոր դասընթացները առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ են: Եզրափակիչ գնահատումով (քննությամբ) են ավարտվում նաև բնագիտական ուղղվածության մասնագիտությունների **(ֆիզիկա-մաթեմատիկական, կենսաբանա-քիմիական, աշխարհագրական)** այն մեծածավալ դասընթացները, որոնք հարակից են տվյալ մասնագիտացմանը: Յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում ներառված են եզրափակիչ գնահատումով մինչև 4 մասնագիտական դասընթաց, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ այդ դասընթացների առավելագույն քանակը երեքն է:

5.2.2 Եզրափակիչ գնահատումով դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն: Ընթացիկ քննությունները պարտադիր կերպով անցկացվում են գրավոր, իսկ եզրափակիչ քննության ձևը դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի ղեկանը:

5.2.3 Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2-4 ընթացիկ ստուգումների (գնահատումների) արդյունքներով: Ընթացիկ ստուգումներն անցկացվում են կարճ հարցումների, փոքրածավալ գրավոր/ստուգողական աշխատանքների, անհատական առաջադրանքների և այլ հանձնարարությունների կատարողականի

ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն ընտրում է դասընթացը կազմակերպող ամբիոնը:

5.2.4 Եզրափակիչ գնահատումով դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գ_{արդ.}) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Գ_{մաս.}, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 20(10) միավոր: Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանը գնահատվում է հետևյալ սանդղակով.

Աղյուսակ1.

| Մասնակցության աստիճանը (%) | Հատկացվող միավորը |
|----------------------------|-------------------|
| 90-100 | 20 |
| 80-90 | 16 |
| 70-80 | 10 |
| 60-70 | 4 |
| 50-60 | 2 |
| < 50 | 0 |

բ) Ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ Գ_{ինք.}, որին հատկացվում է 10 միավոր: Ինքնուրույն աշխատանքի ձևերից են ռեֆերատը, տնային առաջադրանքները, հանձնարարված մասնագիտական գրականության մշակումները, արտալսարանային ընթերցանությունը, թեմատիկ զեկուցումները և այլն: Եթե ինքնուրույն աշխատանքը կատարված է նշանակված ժամանակահատվածում և ուսանողը խմբի ներկայությամբ կարողանում է այն բանավոր ներկայացնել, ապա նա կարող է ստանալ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսած առավելագույն միավորը: Առանց բանավոր ներկայացման ուսանողը ստանում է նախատեսած միավորների կեսը:

զ) Գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցությունը, պարապմունքների ընթացքում նրա ակտիվությունը և հմտությունները ($Q_{սեմ.}$) գնահատվում են 20 միավորով: Գործնական(սեմինար) և լաբորատոր պարապմունքները կրթական գործընթացի կարևորագույն տարրերից են: Այդ պարապմունքների ընթացքում ուսանողի ակտիվությունը գնահատվում է դասախոսի կողմից և արձանագրվում է մատյաններում՝ յուրաքանչյուր դասաժամին հատկացված միավորներով: Նշված պարապմունքներին հատկացված առավելագույն միավորները ուսանողները կարող են ստանալ այն դեպքում, եթե պատրաստվել և ակտիվորեն մասնակցել են դրանց:

դ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների արդյունքներից $\Sigma(P_{ընթ.})$, որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 20 միավոր,

ե) եզրափակիչ քննության արդյունքից ($P_{եզր.}$), որը կարող է գնահատվել մինչև 20 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունաբար գնահատականը (միավորը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Q_{արդ.} = Q_{մաս.} + Q_{իմք} + Q_{սեմ} + \Sigma P_{ընթ.} + P_{եզր.}:$$

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 5 միավոր, ինքնուրույն աշխատանքը՝ 6 միավոր, գործնական(սեմինար) և լաբորատոր աշխատանքները՝ 15 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 9 և 12 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 14 միավոր, ապա այդ դասընթացի արդյունաբար գնահատականը կլինի՝

$$Q_{արդ.} = 5+6+15+9+12+14 = 61:$$

5.2.5. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունաբար (կիսամյակային) գնահատականը (միավորը) ($Q_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ $Q_{մաս.}$, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը կարող է վաստակել 10 միավոր: Մասնակցության աստիճանը գնահատվում է համաձայն աղյուսակ 1-ում բերված սանդղակի:

բ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատումից՝ $Q_{ինք.}$, որին հատկացվում է 10 միավոր:

գ) ուսուցանվող նյութի ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 4 ընթացիկ ստուգումների արդյունքներից $\Sigma(U_{ընթ.})$, որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 20 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը (միավորը) հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Q_{արդ.} = Q_{մաս} + Q_{ինք.} + \Sigma U_{ընթ.}$$

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 8 միավոր, ինքնուրույն աշխատանքները՝ 7 միավոր, իսկ դասընթացի համար նախատեսված 4 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 11, 10, 13 և 16 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝

$$Q_{արդ.} = 8 + 7 + 11 + 10 + 13 + 16 = 65$$

5.2.6. Դասընթացների գնահատման վերը նկարագրված եղանակները կիրառվում են միայն մասնագիտական դասընթացների (ուսումնական մոդուլների) գնահատման համար: Մնացած բոլոր կրթամասերի բաղկացուցիչ դասընթացների գնահատումն իրականացվում է ավանդական եղանակով (ստուգարք կամ 100 միավորանոց սանդղակով գնահատվող եզրափակիչ քննություն):

5.2.7. Պրակտիկաները գնահատվում են ստուգարքի ձևով:

5.2.8. Քննության գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ երկօրյա ժամկետում դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև նաև ֆակուլտետի դեկանին:

5.3. Կիրարկման ընթացակարգը

5.3.1. Ընթացիկ և եզրափակիչ ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշներն ուսանողներին տրամադրվում են նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):

- 5.3.2.Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցերը կազմվում են ֆակուլտետներում և հաստատվում ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն:
- 5.3.3.Ընթացիկ քննություններն անցկացվում են ուսումնառության կիսամյակի 7-8-րդ և 15-16-րդ շաբաթներում: Ընթացիկ քննության օրը ուսանողն ազատվում է դասերից:
- 5.3.4.Ընթացիկ ստուգումներն անցկացվում են յուրաքանչյուր 4 շաբաթը մեկ (8-րդ կիսամյակում` յուրաքանչյուր 2 շաբաթը մեկ): Ընթացիկ ստուգումն անցկացվում է տվյալ առարկան դասավանդող դասախոսի կողմից` դասացուցակով առարկային հատկացված ժամերին (ուսանողը դասերից չի ազատվում):
- 5.3.5.Եզրափակիչ քննություններն անցկացվում են կիսամյակային քննաշրջաններում` 18-20-րդ շաբաթներում (7-րդ և 8-րդ կիսամյակում` 16-17-րդ շաբաթներում):

5.4. Գնահատման սանդղակը և նշագրումը

- 5.4.1.ՎՊՄԻ-ուն ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

| Գնահատականը ըստ 5 բալանոց համակարգի | Գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի | Գնահատականը ըստ ECTS համակարգի |
|-------------------------------------|---|--------------------------------|
| «գերազանց» (5) | 96-100 | A ⁺ |
| «գերազանց» (5) | 91-95 | A |
| «գերազանց» (5) | 86-90 | A ⁻ |
| «լավ» (4) | 81-85 | B ⁺ |
| «լավ» (4) | 76-80 | B |
| «լավ» (4) | 71-75 | B ⁻ |
| «բավարար» (3) | 66-70 | C ⁺ |
| «բավարար» (3) | 61-65 | C |

| | | |
|------------------------------|----------|---|
| «բավարար» (3) | 56-60 | C |
| «անբավարար» (2) ¹ | 40- 55 | D |
| «անբավարար» (2) ² | մինչև 40 | F |
| «ստուգված» | 56-100 | S |
| «չստուգված» ¹ | 40-55 | U |
| «չստուգված» ² | մինչև 40 | U |

¹) Թույլատրվում է մասնակցել քննության պարտքերի մարմանը

²) Չի թույլատրվում մասնակցել պարտքերի մարմանը

5.4.2. Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ 87 («գերազանց»)):

5.4.3. Այն դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 56-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:

6. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

6.1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ՎՊՄԻ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

6.2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

6.3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային

արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և միջև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

Ծրագրային կրեդիտների (**ԾԿ**) քանակը

Գնահատման կրեդիտների (**ԳԿ**) քանակը

Վարկանիշային միավորները (**ՎՄ**)

Միջին որակական գնահատականը (**ՄՈԳ**)

6.4. Ծրագրային կրեդիտը (**ԾԿ**) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

6.5. Գնահատման կրեդիտը (**ԳԿ**) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով.

$$\mathbf{ԳԿ} = \sum \mathbf{Կրեդիտ}$$

6.6. Վարկանիշային միավորը (**ՎՄ**) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$\mathbf{ՎՄ} = \sum_{i=1}^k (\mathbf{ԳԿ} \times \mathbf{ԾԳ})$$

որտեղ Գորդ—ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է (օրինակ, եթե 5 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 72, ապա տվյալ դասընթացից վարկանիշային միավորը հավասար է 5 կրեդիտ $\times 72 = 360$ ՝ 500 հնարավորից):

6.7. Միջին որակական գնահատականը (**ՄՈԳ**) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01 ճշտությամբ).

$$\mathbf{ՄՈԳ} = \frac{\mathbf{ՎՄ}}{\sum \mathbf{ԳԿ}}$$

6.8. Հաշվառվում են և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

6.9. Ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում բուհը պարտավոր է, համաձայն բուհում գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական

տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

7. Ուսման առաջադիմությունը

- 7.1.Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա:
- 7.2.Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝
- ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ միջին ուսումնական բեռնվածության (10% թույլատրելի շեղումով),
 - բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները,
 - գ) ապահովել է բակալավրի կրթական աստիճանում ուսանողի համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի 56 նվազագույն շեմը:
- 7.3.Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում, եթե չի բավարարել նախորդ կետում նշված երեք պայմաններից որևէ մեկը:
- 7.4.Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:
- 7.5.Բակալավրի կրթական ծրագրի համար փորձաշրջանի տևողությունը համընկնում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանին:
- 7.6.Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից:
- 7.7.Մինչև կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, ներբուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց վարկանիշային միավորների օգնությամբ:
- 7.8.Ուսանողի բացարձակ առաջադիմությունը չափվում է միջին որակական գնահատականով:

8. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

- 8.1.Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

- 8.2. Հարգելի պատճառներով բացակայության դեպքում բաց թողնված դասաժամերը հաշվի չեն առնվում դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը որոշելիս, եթե այն հավաստող սահմանված կարգի բժշկական տեղեկանքը ներկայացվում է հաճախումները վերսկսելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- 8.3. Բնությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատուն գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:
- 8.4. Հարգելի պատճառով ընթացիկ քննությանը կամ ստուգմանը չներկայացած ուսանողն այն կարող է վերահանձնել մինչև հաջորդ ընթացիկ քննությունը (ստուգումը) ընկած ժամանակահատվածում՝ նախապես այն համաձայնեցնելով դեկանատի և պարապող դասախոսի հետ:
- 8.5. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ քննաշրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:
- 8.6. Եզրափակիչ քննությունից «անբավարար» (8 միավորից փոքր) գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա արդյունարար գնահատականը ցածր է «բավարար» գնահատականից (գտնվում է 40-55 միջակայքում):
- 8.7. Սահմանված ժամկետներում ընթացիկ ստուգումներն անհարգելի պատճառով չհանձնած կամ արդյունարար նվազագույն 56 միավորը չհավաքած ուսանողներն իրավունք ունեն դրանք լրացնելու և հանձնելու ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում, սակայն չեն կարող վաստակել ավելի, քան անցողիկ 56 միավորը:
- 8.8. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:
- 8.9. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակը ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

9. Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը

- 9.1. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (նախագիծ, ատենախոսություն և այլն) կատարումով և պաշտպանությամբ և ծրագրի ավարտից հետո կազմակերպվող մասնագիտական ամփոփիչ քննությամբ, որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:
- 9.2. Ավարտական աշխատանքի թեման ընտրվում և հաստատվում է ավարտական ուսումնական տարվա առաջին 2 շաբաթների ընթացքում: Աշխատանքը կատարվում է ավարտական ուսումնական տարվա ընթացքում:
- 9.3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.
- ա) Աշխատանքի ներկայացումը մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը ներառում է կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն:
 - բ) Ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում մասնագիտացնող ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության:
 - գ) Մասնագիտացնող ուսումնական կառույցի (ամբիոնի) կողմից աշխատանքը գրախոսման ուղարկելու կազմակերպում:
 - դ) Ավարտական աշխատանքի պաշտպանություն պետական քննական հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:
- 9.4. Ավարտական աշխատանքի պաշտպանության և մասնագիտական ամփոփիչ քննության գնահատումը կատարվում է 5.4.1. կետում ներկայացված 100 միավորանոց սանդղակով:
- 9.5. Ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

| Թիվ | Չափանիշ | Առավելագույն միավորը |
|-----|-------------------------------------|----------------------|
| 1 | Ներկայացման որակը | 30 |
| 2 | Ձևակերպման որակը | 20 |
| 3 | Կատարման ինքնուրույնության աստիճանը | 30 |
| 4 | Արդիականությունը(նորույթը) | 20 |
| | Ընդամենը՝ | 100 |

10. Կրեդիտների փոխանցումը

10.1.Այլ բուհերից ՎՊՄԻ բակալավրի կրթական ծրագիր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

10.2.Այլ ուսումնական ծրագրից ՎՊՄԻ բակալավրի ուսումնական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե՝

- ա) դրանց բովանդակությունները միանման են,
- բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,
- գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

10.3.Այլ բուհում ՎՊՄԻ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ՎՊՄԻ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

10.4.Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար ՎՊՄԻ-ին ունի ECTS բուհական համակարգող:

11.Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

11.1.Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների (թյուրորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:

11.2.Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը՝ առաջինից միջև ավարտական կուրս:

11.3.Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ:

12.Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

12.1. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,

12.2.Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ՎՊՄԻ կողմից առաջադրվող կանընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթերի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման:

**13. ՎՊՄԻ ուսումնական օրացույցը
2013-2014 ուսումնական տարի
Աշնանային կիսամյակ**

| | |
|--|---|
| 01 սեպտեմբերի 2013թ. – 25 հունվարի 2014թ. | |
| Ուսուցման սկիզբ | 01 սեպտեմբերի |
| 1-ին փուլի ընթացիկ ստուգումներ | 4-րդ շաբաթ |
| 1-ին փուլի ընթացիկ քննություններ | 7 - 8 շաբաթներ |
| 2-րդ փուլի ընթացիկ ստուգումներ | 9-րդ շաբաթ |
| 3-րդ փուլի ընթացիկ ստուգումներ | 13-րդ շաբաթ |
| 2-րդ փուլի ընթացիկ քննություններ | 15 - 16 շաբաթներ |
| 4-րդ փուլի ընթացիկ ստուգումներ | 16-րդ շաբաթ |
| Կուրսային աշխատանքների և ստուգարքների հանձնում | 16-րդ շաբաթ |
| Ուսուցման ավարտ | 28 դեկտեմբերի |
| Քննաշրջան | 05 հունվարի - 25 հունվարի |
| Ձմեռային արձակուրդներ | 29 դեկտեմբերի – 04 հունվարի 26 հունվարի - 08 փետրվար |

Գարնանային կիսամյակ

| | |
|--|--------------------------|
| 09 փետրվարի 2013թ. - 2 հունիսի 2014թ. | |
| Ուսուցման սկիզբ | 09 փետրվարի |
| 1-ին փուլի ընթացիկ ստուգումներ | 4-րդ շաբաթ |
| 1-ին փուլի ընթացիկ քննություններ | 7 - 8 շաբաթներ |
| 2-րդ փուլի ընթացիկ ստուգումներ | 9-րդ շաբաթ |
| 3-րդ փուլի ընթացիկ ստուգումներ | 13-րդ շաբաթ |
| 2-րդ փուլի ընթացիկ քննություններ | 15 - 16 շաբաթներ |
| 4-րդ փուլի ընթացիկ ստուգումներ | 17-րդ շաբաթ |
| Կուրսային աշխատանքների և ստուգարքների հանձնում | 17-րդ շաբաթ |
| Ուսուցման ավարտ | 05 հունիսի |
| Քննաշրջան | 08 - 26 հունիսի |
| Ամփոփիչ մասնագիտական քննություն և ավարտական աշխատանքի պաշտպանություն | 12 մայիսի - 30 մայիսի |
| Ամառային արձակուրդներ | 01 հուլիսի - 31 օգոստոսի |

Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1.Տեղեկագրի նպատակը

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում իրականացվող բակալավրի կրթական

ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված ելքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

2. 010600 «Ֆիզիկա» մասնագիտության տեղեկագիրք

2.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս ՅՍՍ պարտադիր դասընթացներ

Պ 51- Հայոց պատմության հիմնահարցեր (4 կրեդիտ)

Շաբաթական 1,5 ժամ (32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար)

1-ին, 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ապագա մանկավարժներին ծանոթացնել հայոց պատմության կարևորագույն իրադարձություններին, ցույց տալ «Պատմություն» առարկայի կարևորությունը, դերն ու նշանակությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կժանոթանա հայոց հին և միջնադարյան պատմությանը,
2. կկարողանա քննադատական վերաբերմունք հանդես բերել հայոց պատմության հին և միջին շրջանի կարևորագույն իրադարձություններին,
3. կյուրացնի հայոց պետականությունների պատմությունը,

4. կկարողանա վերլուծել հայ ազգային ազատագրական շարժման կարևորագույն իրադարձությունները, Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ հանրապետությունների պատմությունը և հետևություններ անել:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության վաղնջագույն բնօրրան, «հայ» և «արմեն» անունները, նրանց արմատները: Թեմա 2. Վանի թագավորությունը, Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների, Ռուբինյանների հարստությունների պատմությունը, դրանց հետ առնչվող իրադարձությունները: Թեմա 3. Հայոց եկեղեցու դերը, գործունեությունը պետականության անկման պայմաններում, նրա միավորիչ գործունեությունը, հայ եկեղեցական գործիչներ: Թեմա 4. Հայկական մշակույթի պատմությունը վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը, հայ գրերի ստեղծումը, պետական դպրության կենտրոնները: Թեմա 5. Հայ ազգային ազատագրական շարժումների պատմությունը 5-րդ դարից մինչև մեր օրերը: Հայ ազգային կուսակցությունների առաջացման պատմությունը, անցումը գաղափարական պայքարից զինված ապստամբության, ազատագրական պայքարի գործիչների հերոսական արարքները: Թեմա 6. ԼՂՀ-ի պատմությունը անկախության հռչակումից մինչև միջազգային և ներքին դրություն: Թեմա 7. Հայաստանի 3 հանրապետությունները, ներքին և արտաքին դրությունը, դիվանագիտական կապերը:

ՀԼ 51.1 - Հայոց լեզու և գրականություն-1 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային առանձնահատկությունները, ոճագիտական հիմնական հասկացությունները, ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները, ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական յուրահատկությունները,

2. կտիրապետի իր մասնագիտական բառապաշարին, կկարողանա գրական հայերենով շարադրել մտքերը, գործնականում կկիրառի լեզվաոճական հնարները,
3. կկարողանա ճիշտ գործածել քերականական ձևերը, գործնականում կկիրառի ձևաբանական և շարահյուսական լեզվաոճական հնարները, կկարողանա վարել երկխոսություն և բանավեճ:

Բովանդակությունը.

Թեմա-1. Հայոց լեզվի կազմավորումը և զարգացման փուլերը: Հայ գրերի գյուտը և նրա քաղաքական, պատմական, մշակութային նշանակությունը:

Թեմա-2. Հնդեվրոպական լեզվաընտանիք: Հայերենը որպես նրա առանձին ճյուղ: Հայերենի կետադրությունը: Կետադրական նշաններ: Թեմա-3. Ժամանակակից գրական հայերենի կազմավորումը: Ջարգացման փուլերը: Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ: Դրանց համադրական բնութագիրը: Թեմա-4. Գրական, ազգային, պետական, խոսակցական, մեռած լեզուներ, ժարգոններ, բարբառներ: Բնիկ հայերեն բառեր: Փոխառություններ: Թեմա-5. Հայերենի բառակազմության միջոցները (ածանցում, բառաբարդում, հապավում): Հնաբանություններ, օտարաբանություններ, նորաբանություններ: Թեմա-6. Իմաստաբանություն: Բառերի տեսակներն ըստ ձևաիմաստային դաշտերի (հոմանիշ, հականիշ, համանուն): Հայերենի դարձվածքները: Թեմա-7. Ձևաբանություն: Հայերենի խոսքի մասերը: Դասակարգման հիմունքները: Թեքվող խոսքի մասեր: Թեմա-8. Չթեքվող խոսքի մասեր: Թեմա-9. Շարահյուսություն: Նախադասության տեսակներն ըստ կազմության: Թեմա-10. Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: Թեմա-11. Լեզու և ոճ: Ոճի տեսակները: Թեմա-12. Լեզվի պատկերավորման միջոցները: Նրանց դերը խոսքի գեղեցկության, հուզականության գործում: Թեմա-13. Ստուգաբանություն: Անուն, ազգանուն, կեղծանուն: Թեմա-14. Ձեռագրեր, գրիչներ: Մատենադարան: Հայկական տպագրություն: Միջնադարյան Հայաստանի համալսարանները: Թեմա-15. Հայկական տոմար: Հայկական դիցաբանություն: Հայ ժողովրդական տոներ: Թեմա-16. Հայերենագիտություն: Հայերենագիտության երախտավորներ: Սփյուռք, սփյուռքահայ կրթօջախներ:

ՅԼ 51.2 - Հայոց լեզու և գրականություն-2 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել հայ գրականության պատմությունը, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին, սովորեցնել գեղարվեստական երկի վերլուծության հմտությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ գրականության զարգացման առանձնահատկությունները
2. կտիրապետի գեղարվեստական երկ վերլուծելու հմտություններին,
3. կծանոթանա հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին:

Բովանդակությունը.

Թեմա-1 Գրերի ստեղծումը, Մեսրոպ Մաշտոց: Թեմա-2 5-րդ դարի հայ պատմիչները: Թեմա-3 Հայ գրականությունը 10-18-րդ դարերում: Թեմա-4 Հայ գրականությունը 19-րդ դարի առաջին կեսին: Թեմա-5 Հայ գրականությունը 19-րդ դարի 50-60-ական թվականներին: Թեմա-6 Հայ գրականությունը 19-րդ դարի 70-80-ական թվականներին: Թեմա-7 Հայ գրականությունը 19-րդ դարի 90-ական թվականներին: Թեմա-8 Հայ գրականությունը 20-րդ դարի սկզբին:

ՈՒ 51.1 – Մասնագիտական ռուսաց լեզու-1 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ձևավորել ռուսերենի իմացության այնպիսի մակարդակ, որը կապահովի ուսանողների ռուսերենով հաղորդակցվելու, երկխոսություն ծավալելու ունակությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

1. ռուսերենով ճիշտ կառուցել իր բանավոր խոսքը.
2. ծավալել երկխոսություն ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ այլ ոլորտներում.
3. կիրառել ռուսաց լեզվի քերականական կառուցվածքը.
4. վերլուծել, մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական և այլ բնույթի (գեղարվեստական և ճանաչողական) տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1. Խաղաղության մշակույթ: ՀՀ ներքին և արտաքին քաղաքականությունը: Տեսական նյութ. Հնչյունաբանություն: Ռուսաց լեզվի հնչյունական համակարգը; ռուսերենի շեշտ; բանավոր և գրավոր խոսքի հնչերանգը:

Թեմա 2. Ռուսաց լեզուն որպես ՄԱԿ-ի աշխատանքային լեզուներից մեկը: Քերականական նյութ. Գոյականի քերականական սեռը: Ընդհանուր

քերականական սեռի բառեր: Որոշչի համաձայնեցումը գոյականի հետ: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 3. Մարդ: Դիմանկար: Բնավորություն: Ընտանիք: Քերականական նյութ. Որոշչի համաձայնեցումը գոյականի հետ: Քերականական կառույցների կազմում: Գոյականների հոլովները:

Թեմա 4. Տուն, բնակարան, քաղաք, որում ես ապրում եմ: Քերականական նյութ. Գոյականի թիվը: Եզակի թիվ, հոգնակի թիվ: Անեզական և անհոգնական գոյականներ:

ՈԼ 51.2 - Մասնագիտական ռուսագ լեզու -2 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ձևավորել ռուսերենի իմացության այնպիսի մակարդակ, որը կապահովի ուսանողների ռուսերենով հաղորդակցվելու, երկխոսություն ծավալելու ունակությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

1. ռուսերենով ճիշտ կառուցել իր բանավոր խոսքը.
2. ծավալել երկխոսություն ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ այլ ոլորտներում.
3. կիրառել ռուսագ լեզվի քերականական կառուցվածքը.
4. վերլուծել, մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական և այլ բնույթի (գեղարվեստական և ճանաչողական) տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կրթություն: Կրթության համակարգը Հայաստանում: Քերականական նյութ. Ածական անուն: Որակական, հարաբերական և ստացական ածականներ: Ածականի համեմատական աստիճանները: Ամբողջական և կրճատ ձևերը: Նրանց կիրառությունը կապակցություններում և նախադասություններում: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 2. Երիտասարդությունը 21 դարում: Քերականական նյութ. Թվական անուն: Թվականի տեսակները, ուղղագրությունը, կապակցությունները և շարահյուսական դերը: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 3. Աշխատանքի նշանակությունը մարդու կյանքում: Քերականական նյութ.Դերանուն: Դերանունների տեսակները: Քերականական կառույցների կազմում:

ՈԼ 51.3 - Մասնագիտական ռուսագ լեզու - 3 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական պարապմունք)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողի մոտ ձևավորելու ռուսերեն լեզվի այնպիսի մակարդակ, որը կապահովի տվյալ լեզվով հաղորդակցումը, սեփական տեսակետը արտահայտելու և երկխոսություն ծավալելու նրա ունակությունը մասնագիտական և այլ ոլորտներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները.

2. կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինային համակարգին.

3. կտիրապետի մասնագիտական տեքստի քերականական առանձնահատկություններին, կարգերին և շարահյուսական կառուցածքներին.

4. կկարողանա սեղմ ձևով ներկայացնել այս կամ այն մասնագիտական տեքստը, առանձնացնել նրանում պարունակվող հիմնական միտքը, նշել առանցքային բառերը (եզրույթները), ընդգծել տվյալ հոդվածում պարունակվող գիտական նորույթը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գիտություն և տեխնիկա: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղծական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 2. Մշակույթ և արվեստ: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղծական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 3. Առողջություն: Հանգիստ: Սպորտ: Ժամանց: Քերականական նյութ: Բայ: Բայի եղանակավորում: Սահմանական, ըղծական և հրամայական եղանակները: Քերականական կառույցների կազմում:

ՈՒ 51.4 Մասնագիտական ռուսաց լեզու - 4 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական պարապմունք)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացը նպատակ ունի ուսանողի մոտ ձևավորելու ռուսերեն լեզվի այնպիսի մակարդակ, որը կապահովի տվյալ լեզվով հաղորդակցումը, սեփական տեսակետը արտահայտելու և երկխոսություն ծավալելու նրա ունակությունը մասնագիտական և այլ ոլորտներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները.

2. կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինային համակարգին.

3. կտիրապետի մասնագիտական տեքստի քերականական առանձնահատկություններին, կարգերին և շարահյուսական կառուցվածքներին.

4. կկարողանա սեղմ ձևով ներկայացնել այս կամ այն մասնագիտական տեքստը, առանձնացնել նրանում պարունակվող հիմնական միտքը, նշել առանցքային բառերը (եզրույթները), ընդգծել տվյալ հոդվածում պարունակվող գիտական նորույթը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Բնություն: Բնապահպանություն: Էկոլոգիա: Քերականական նյութ: Դերբայ: Դերբայների տեսակները: Ժամանակի պարագա և տեղի պարագա: Կառավարման սկզբունքով կառուցված պարագայական կապակցություններ: Քերականական կառույցների կազմում:

Թեմա 2. ՁԼՄներ և դրանց դերը ռուսաց լեզվի ուսուցման գործում: Քերականական նյութ: Դերբայ: Դերբայների տեսակները: Քերականական կառույցների կազմում: Շարահյուսություն: Պարզ և բարդ նախադասություններ:

Թեմա 3. Հայրենիք: Մեր հանրապետությունը: Կենսաձևը Հայաստանում: Շարահյուսություն: Պարզ և բարդ նախադասություններ: Կետադրություն:

OL0671 Մասնագիտական օտար լեզու (Անգլերեն) -1 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական պարապմունք)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհարստացնի ակտիվ և ներգոր բառապաշարը.

2. ձեռք կբերի անգլերեն լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ:

3. կսովորի անգլերեն լեզվի քերականության հատուկ բարդություն ունեցող երևույթները.

Բովանդակությունը.

Թեմա 1. Արտասանություն, ուղղախոսություն. անգլերեն լեզվի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: Թեմա 2. Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): Թեմա 3. Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարահատկությունը (ուղիղ և շրջուն), հարցական և ժխտական նախադասությունները, գոյականի, ածականի և բայի ձևաբանական և քերականական նշանակությունները համեմատության աստիճանների կարգ, նախդիրների գործառույթը նախադասության մեջ: Թեմա 4. Առաջարկվող թեմաներ. ընտանիք, ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ, իմ հետաքրքրությունները, ճանապարհորդություն, երազանքներ, իմ ապագա մասնագիտությունը և այլն:

OL0672 Մասնագիտական օտար լեզու (Անգլերեն) - 2 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական պարապմունք)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա.

2. կունենա օտար լեզվով բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ.

3. կկարողանա ընկալել լսած/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: Թեմա 2. Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: Թեմա 3. Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանողական և բայական կարգերի) համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: Թեմա 4. Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին:

OL0672 Մասնագիտական օտար լեզու (Անգլերեն) - 3 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական պարապմունք)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել) զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- պետք է ունենա բավականաչափ բառապաշար՝ ներկայացնելու ինքն իրեն, խոսել իր նախընտրությունների մասին, այն մարդկանց մասին, որոնց ճանաչում է,
- պետք է կարողանա մասնակցել շատ պարզ խոսակցությունների, կարդալ և հասկանալ պարզ հայտարարություններ, գրել բացիկներ, օրինակ՝ շնորհավորանքներ, ինչպես նաև լրացնել շատ պարզունակ բլանկեր՝ անձնական տվյալներով,
- պարզ տերմիններով մեկնաբանել իր շրջապատին վերաբերող հարցեր:

Բովանդակությունը.

Թեմա 1. Արտասանություն, ուղղախոսություն: Ներկա անորոշ ժամանակաձև: **Թեմա 3.** Անձնական դերանուններ. Հատուկ հարց: **Թեմա 4.** Գոյականի ստացական հոլով: **Թեմա 5.** Անցյալ անորոշ ժամանակաձև: **Թեմա 6.** „To Have „ in the present.“Some, Any, No“: Բառակազմություն: Գոյականակերտ վերջածանցներ: **Թեմա 7.** „There is, There are, There was, there were“. The modal verbs „can“ and „to be able to“: **Թեմա 8.** Ջրո հոդի գործածման առանձնահատկությունները: Ներկա վաղակատար ժամանակաձև: **Թեմա 9.** Modal verbs „ Must, should , have to“:

OL0672 Մասնագիտական օտար լեզու (Անգլերեն) - 4 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական պարապմունք)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կկարողանա շփվել պարզ և առօրյա իրավիճակներում, որոնք վերաբերում են ամենօրյա գործունեությանը, օգտագործել մի շարք արտահայտություններ՝ նկարագրելու իր ընտանիքը, բնակության պայմանները, իր համալսարանը, աշխատանքը: Ուսանողը պետք է

կարողանա ընթերցել կարճ տեքստեր և գտնել անհրաժեշտ տեղեկությունները տեքստից, ինչպես նաև հասկանալ պարզ տեքստերի, գովազդների, հայատարարությունների բովանդակությունը,

- պետք է իմանա կենսաօրության / ինքնակենսագրության կազմելու բոլոր ձևերը, խոսել մարդկանց մասին, բնութաօրել նրանց և նկարագրել արտաքինը, քաղաքի, նրա ճարտարապետության, տեսարժան վայրերի, մարդկանց մասին,
- տիրապետի լսելու և պարզ հայտարարություններ, նամակներ տեքստեր հասկանալու հմտություններին, ինչպես նաև գրագետ նամակ կամ հաղորդագրություն գրելու և հյուրանոցում կամ աշխատանքի գործակալությունում անձնական թերթիկ լրացնելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ժամանակաձևերի համաձայնեցումը անգլերենում: ***Թեմա 2.*** Կրավորական սեռ: ***Թեմա 3.*** Անցյալ և ապառնի շարունակական ժամանակաձևեր: ***Թեմա 4.*** Ուղղակի և անուղղակի խոսքի կազմությունը: ***Թեմա 5.*** Որոշիչ հոդի գործածությունը հատուկ գոյականների հետ: ***Թեմա 6.*** Անորոշ դերանուններ: ***Թեմա 7.*** Ընդհանուր ակնարկ դերբայների վերաբերյալ: ***Թեմա 8.*** Բառաշարի, բառակազմական կանոնների և և քերականական կառույցների կրկնություն:

OL 52.1 – Մասնագիտական գերմաներեն լեզու- 1 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ համակարգել իրենց նախնական գիտելիքները գերմաներեն լեզվի հնչյունաբանության, քերականության և բառագիտության բնագավառներում և այդպիսով ստեղծել անհրաժեշտ հիմք՝ լեզվի ուսումնասիրության հաջորդ փուլերի համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի գերմաներենի հնչյունական կողմի հիմնական առանձնահատկությունները,
2. կտիրապետի ծրագրով նախատեսված առաջին փուլի համար անհրաժեշտ նվազագույն բառապաշարին,
3. կյուրացնի նշված փուլի համար անհրաժեշտ քերականական նյութը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գերմաներենի արտասանական նորմերը: Արտասանություն և գրություն: Հնչյունաբանական տառադարձություն: Գերմաներենի ձայնավորական և բաղաձայնական համակարգերը: Թեմա 2. Քերականական կարգեր, դրանց արտահայտման միջոցները գերմաներենում: Գոյականի, ածականի և բայի ձևաբանական և քերականական նշանակությունները: Գոյականի հոլովման տիպերը: Հոլովների նշանակությունը և գործածությունը: Համեմատության աստիճանների կարգ: Լիմաստ և սպասարկու բայեր: Նախդիրների գործառույթը նախադասության մեջ: Թեմա 3. Պարզ նախադասություն, դրա շարադասությունը: Ուղիղ և շրջուն շարադասություն: Թեմա 4. Թեմատիկ բառապաշարը ընդգրկում է հետևյալ թեմաները՝ «Ընտանիք», «Իմ մասնագիտությունը», «Համալսարան», «Իմ հանգստյան օրը», «Ճանապարհորդություն», «Գերմանիա»:

ՕԼ 52.2 - Մասնագիտական գերմաներեն լեզու- -2 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգաթղթ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել ուսումնական առաջին փուլում ձեռք բերած գիտելիքները գերմաներենի ձևաբանության և քերականության բնագավառներում, ինչպես նաև ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ակտիվացնել այդ բառապաշարը՝ համապատասխան երկխոսությունների և տեքստերի վերարտադրման նպատակով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. գործնականում կկիրառի գերմաներենի ձևաբանական և քերականական այն կառույցները, որոնք ուսումնասիրվում են այս փուլում:
2. կտիրապետի համապատասխան թեմատիկ բառապաշարին, որը վերաբերում է մասնագիտական ոլորտին,
3. կվարի երկխոսություններ, կկատարի մասնագիտական տեքստերի թարգմանություն, վերարտադրություն, կգրի փոխադրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գոյականի նշանակությունը և շարահյուսական գործառույթները: Հոգնակի թվի կազմության հիմնական տիպերը: Անհոգնական և անեզական գոյականներ: Գոյականների հոլովման համակարգը և գերմաներենի հոլովների կիրառական նշանակությունները: Թեմա 2. Բայերի ձևաբանական և իմաստաքերականական դասակարգումը: Սուբյեկտիվ և օբյեկտիվ բայեր: Անցողական և անանցական, երկսեռ բայեր: Բայի քերականական կարգերը: Թեմա 3. Նախադասությունների դասակարգումը ըստ հնչերանգի և ըստ կազմության: Միավորյալ նախադասություններ: Ստորոգյալի համաձայնեցումը ենթակայի հետ: Թեմա 4. Թեմատիկ բառապաշարը ընդգրկում է «Գերմանիայի մեծ քաղաքները», «Ընկերական շրջապատում», «Տնտեսություն և քաղաքականություն», «Իմ զբաղմունքը», «Իմ ուսումը», «Հայաստանի պատմությունից», «Համագործակցություն» և այլն:

OL 52.2 - Մասնագիտական գերմաներեն լեզու- -3 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

OL 52.2 - Մասնագիտական գերմաներեն լեզու- -4 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

OL 53.1 -Մասնագիտական ֆրանսերեն լեզու-1 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ համակարգել իրենց նախնական գիտելիքները ֆրանսերեն լեզվի հնչյունաբանության, քերականության և

բառագիտության բնագավառներում և այդպիսով ստեղծել անհրաժեշտ հիմք՝
լեզվի ուսումնասիրության հաջորդ փուլերի համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտասանել ֆրանսերեն հնչյուններն ու դրանց տառադարձման նշանները,
2. կկարողանա ճիշտ հնչերանգով ձևակերպել հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները,
3. կիմանա ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծել բառը և նախադասությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchancement. Liaison. Թեմա 2. Հատուկ և հասարակ գոյականներ: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: Թեմա 3. Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: Թեմա 4. Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Թեմա 5. Քանակական և դասական թվականներ: Քանակական թվականի գործածությունը: Թեմա 6. Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:

ՕԼ 53.2 - Մասնագիտական ֆրանսերեն լեզու -2 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգաթղթ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել ուսոման առաջին փուլում ձեռք բերած գիտելիքները ֆրանսերենի ձևաբանության և քերականության բնագավառներում, ինչպես նաև ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ակտիվացնել այդ բառապաշարը՝ համապատասխան երկխոսությունների և տեքստերի վերարտադրման նպատակով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ճիշտ արտասանել ֆրանսերենի հնչյունները, ճիշտ արտասանությամբ ձևակերպել նախադասությունը,

2. կկարողանա լսելով հասկանալ և վերարտադրել մասնագիտական տեստեր, որոնք պարունակում են յուրացված բառապաշարը և քերականական նյութը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գոյական անուն, միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Les funeraillles, les entrailles. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը (des cœurs-fleurs, des casse-croute և այլն): Թեմա 2. Ածականի իմաստի փոփոխությունը՝ կախված նրա դիրքից. un homme grand - un grand homme. Անորոշ դերանվանական ածականներ: Թեմա 3. Հարաբերական դերանուններ, դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ qui, que, dont, ou, lequell և այլն (դասակարգում): Թեմա 4. Պայմանական եղանակ, կազմությունը և գործածությունը համադաս և ստորադասական նախադասություններում: Ըղծական եղանակ: Ահմանական եղանակը ուրիշի ուղղակի խոսքում:

OL 53.2 - Մասնագիտական ֆրանսերեն լեզու -2 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

OL 53.2 - Մասնագիտական ֆրանսերեն լեզու -2 (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Փ 51 - Փիլիսոփայություն (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել փիլիսոփայության առարկային և նրա խնդիրներին, խորացնել և ընդլայնել նրանց ընդհանուր

տեսական գիտելիքների պաշարը: Ուսանողներին գաղափար տալ մարդու էության, բնության և հասարակության օրենքների և օրինաչափությունների մասին, օգնել տեսական գիտելիքները օգտագործել գործնականում: Հիմք ստեղծել հասարակական մյուս գիտությունների հետագա ուսումնասիրության համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կարողանա ըմբռնել բնության և հասարակական օրենքների բնույթը,
2. կտիրապետի փիլիսոփայության հետազոտության մեթոդներին,
3. կարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ,
4. կարողանա տարբերակել փիլիսոփայական տարբեր ուղղությունների առանձնահատկությունները,
5. որպես մեթոդաբանություն փիլիսոփայությունը կարողանա կիրառել այլ գիտությունների ուսումնառության ընթացքում:

Բովանդակությունը.

Թեմա-1 Փիլիսոփայությունը որպես գիտություն: Թեմա-2 Փիլիսոփայության զարգացման պատմական էտապները: Թեմա-3 Մատերիա և կեցություն: Թեմա-4 Հոգևորի պրոբլեմը փիլիսոփայության մեջ: Թեմա-5 Ջարգացման հիմնախնդիրը: Թեմա-6 Իմացության տեսություն: Թեմա-7 Գիտական իմացության յուրահատկությունը: Թեմա-8 Սոցիալական փիլիսոփայություն: Թեմա-9 Հասարակության սոցիալ-տնտեսական համակարգը: Թեմա-10 Հասարակության քաղաքական համակարգը: Թեմա-11 Մարդու հիմնախնդիրը փիլիսոփայության մեջ: Թեմա-12 Հասարակական գիտակցություն: Թեմա-13 Արժեքաբանության փիլիսոփայություն:

ԸՖԴ 51-Մարմնակրթություն 64 ժամ

Դասավանդվում է 1-6-րդ կիսամյակներում՝ շաբաթական 2 ժամով: Կրեդիտային միավոր չի հատկացվում:

ՀՍՏ Բուհական բաղադրիչ

S 51 - Տնտեսագիտության հիմունքներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2,5 ժամ (24 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տնտեսագիտության մեթոդաբանության, շուկայական տնտեսության բովանդակության,

սեփականատիրական հարաբերությունների, միկրոտնտեսական և մակրոտնտեսական զարգացման օրինաչափությունների, պետական բյուջեի ու պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման մասին պատկերացումներ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի տնտեսագիտության հիմունքները,
2. պատկերացում կունենա շուկայական տնտեսության բնույթի, կատեգորիաների, զարգացման հիմնական օրինաչափությունների մասին:

Բովանդակությունը.

Թեմա-1Տնտեսագիտության տեսության ծագումն ու զարգացումը: Ուսումնասիրման առարկան և մեթոդները: Թեմա-2 Արտադրության բնութագիրը: Թեմա-3 Շուկայական էկոնոմիկայի տեսության հիմունքներ: Արժեքի տեսություններ: Թեմա-4 Շուկայական հարաբերությունների էությունը, կառուցվածքն ու ֆունկցիաները: Թեմա-5Տնտեսական համակարգի ինքնակառավարումը: Շուկայական հավասարակշռվածություն: Թեմա-6 Ֆիրման շուկայական հարաբերությունների համակարգում: Թեմա-7 Ձեռնարկատիրական կապիտալի ձևավորումը: Թեմա-8 Ծախքերի էությունը: Արտադրություն և ծախքեր: Թեմա-9Շահույթ և շահութաբերություն: Տնտեսական շահույթ, ձեռնարկատիրական եկամուտ, աշխատավարձ:Թեմա-10 Ազրո-արդյունաբերական համալիր: Ռենտայի տեսություն: Թեմա-11Մակրոտնտեսական քաղաքականության նպատակներն ու հասնելու ուղիները: Թեմա-12Կուտակում, սպառում և խնայողություններ: Թեմա-13 Տնտեսական աճ: Տնտեսական զարգացման փուլայնությունը: Թեմա-14 Աշխատանք, զբաղվածություն և գործազրկություն Մարդկային կապիտալի տեսությունը: Թեմա-15 Դրամա-վարկային համակարգի էությունը: Արժեզրկում: Թեմա-16 Ֆինանսական համակարգ և ֆինանսական քաղաքականություն: Թեմա-17 Պետության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Թեմա-18Համաշխարհային տնտեսությունը և զարգացման օրինաչափությունները: Թեմա-19Միջազգային արժույթային և ֆինանսական համակարգեր:

ՀԱՏ Կամընտրական դասընթացներ

Շաբաթական 1,5 ժամ (16 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար),

4-րդ կիսամյակ, ստուգարք

Փ61- Քաղաքագիտություն (2 կրեդիտ)

Առարկայի ուսումնական նպատակներն ու խնդիրները.

1) Ուսանողին պետք է տալ գիտելիքներ քաղաքականության, նրա էության, քաղաքական համակարգի, պետության և այլ հիմնախնդիրների վերաբերյալ:

2) Խորացնել և ընդլայնել գիտելիքները քաղաքական սուբյեկտների նրանց գործառնությունների վերաբերյալ:

3) Նախապատրաստել ուսանողին քաղաքականության մեջ տեսականորեն որոշ հարցերի վերաբերյալ հանգել ինքնուրույն եզրահանգումների:

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.

Քաղաքագիտություն առարկայի վերաբերյալ համապարփակ գիտելիքներ, կարողանա համեմատել հասարակական մյուս գիտությունների հետ, հստակեցնել դասընթացի տեղն ու դերը հասարակագիտական գիտությունների շրջանակում:

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա

Հստակորեն պատկերացում կազմելու քաղաքականության, նրա էության ու կառուցվածքի վերաբերյալ, կատարելու վերլուծություններ, համեմատություններ քաղաքագիտության բոլոր հարցերի վերաբերյալ

Մասնագիտական գիտելիքը նորացնել և փոխանցել

Նոր գաղափարներ առաջ քաշելու հմտությանը

Թիմում աշխատել

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի.

Քաղաքագիտություն առարկայի կարևորագույն խնդիրներին, առարկայի նպատակներին, նրա տեղին ու դերին

Բուհում հասարակագիտական կրթության կազմակերպման ժամանակակից մոտեցումներին և առանձնահատկություններին

Բուն մասնագիտական գործնական կարողությունների

Գնահատման գործիքների կիրառելու հմտությանը

Դասընթացի ծրագիր

Թեմա 1. Քաղաքագիտության առարկան, խնդիրները:

1. Քաղաքագիտության ուսումնասիրության օբյեկտը:
2. Քաղաքագիտության կատեգորիալ համակարգը:
3. Քաղաքագիտության հետազոտության մեթոդները:
4. Քաղաքագիտության ֆունկցիաները:
5. Քաղաքագիտության և հասարակական մյուս գիտությունների կապը:
6. Համաշխարհային քաղաքական մտքի պարբերացման սկզբունքը:
7. Անտիկ շրջանի քաղաքական միտքը:
8. Միջնադարյան քաղաքական տեսությունները:
9. Նոր և նորագույն շրջանի քաղաքական սկզբունքները:
10. Հայ քաղաքական մտքի զարգացման փուլերը:

Թեմա2.Քաղաքականության սուբյեկտի էությունը և ձևերը:

1. Օբյեկտ – սուբյեկտ հարաբերությունը քաղաքականության մեջ:

2. Քաղաքական սուբյեկտի բնութագիրը:
3. Քաղաքականության սուբյեկտի դասակարգման սկզբունքը:
4. Քաղաքականության սուբյեկտի խմբերը:
5. Մարդը որպես քաղաքականության սուբյեկտ:
6. Գլոբալիզացիա և գլոբալ քաղաքական սուբյեկտներ:

Թեմա 3. Հասարակության իրավաքաղաքական համակարգը, նրա տիպերը:

1. Իրավաքաղաքական համակարգի բնութագիրը:
2. Իրավաքաղաքական համակարգի կառուցվածքը:
3. Համակարգ, ենթահամակարգ, տարր:
4. Համակարգի տիպերն ու ձևերը:
5. ՀՀ իրավաքաղաքական համակարգը:

Թեմա 4. Պետություն, նրա տիպերը և ձևերը:

1. Պետությունը հասարակության քաղաքական համակարգում:
2. Պետության ծագումը:
3. Պետության ֆունկցիաներն ու հատկանիշները:
4. Պետության տիպերն ու ձևերը:
5. Իրավական պետության բնութագիրը:
6. Պետական իշխանության մարմինների ֆունկցիաները:
7. ՀՀ պետական կարգն ու կառուցվածքը:
8. Կառավարման համակարգի առանձնահատկությունները տարբեր երկրներում:
9. Նախագահական կառավարում:
10. Պառլամենտական կառավարում:
11. Կիսանախագահական-կիսա-պառլամենտական կառավարում:
12. ՀՀ կառավարման համակարգը:

Թեմա 5. Քաղաքական իշխանություն:

1. Իշխանություն՝ կատեգորիայի քաղաքագիտական մեկնաբանումը:
2. Իշխանության մեկնաբանման մակարդակները:
3. Իշխանության ռեսուրսներն ու լծակները:
4. Իշխանության տիպերն ու ձևերը:
5. Իշխանության լեգիտիմության խնդիրը:

Թեմա 6. Հասարակական-քաղաքական կազմակերպություններ

1. Քաղաքական կազմակերպության բնորոշումը:
2. Կուսակցությունների տիպերը և գործունեության ձևերը:
3. Քաղաքական կազմակերպությունները Հայաստանի Հանրապետությունում:
4. Հասարակական կազմակերպություններ:
5. Քաղաքական համակարգ և կուսակցություն:

Թեմա 7. Անցումային հասարակության քաղաքական համակարգը:

1. Անցումային հասարակության բնութագիրը:
2. Հասարակության քաղաքական համակարգի կատարելագործումը:
3. Ոչ ժողովրդավարականից անցում ժողովրդավարության:
4. Ազգայինը անցումային համակարգում:
5. Անցումային հասարակության քաղաքական կյանքը:

Թեմա 8. Քաղաքական գործընթացներ և կոնֆլիկտներ:

1. Քաղաքական գործընթացի էությունը:
2. Քաղաքական կոնֆլիկտի բնորոշումը:
3. Գործընթացի տիպերը:
4. Քաղաքական կոնֆլիկտի ձևերը, լուծման ուղիները:
5. Գործընթացների և կոնֆլիկտների դերը կյանքում:

Թեմա 9. Քաղաքական մշակույթ, ձևերը և ֆունկցիաները:

1. Քաղաքական կուլտուրայի հասկացությունը:
2. Քաղաքական կուլտուրայի կառուցվածքային տարրերը:
3. Քաղաքական կուլտուրայի տիպերը:
4. Քաղաքական կուլտուրայի ֆունկցիաները:

Թեմա 10. Մարդու դերը քաղաքականության մեջ:

1. Մարդը որպես քաղաքականության սուբյեկտ:
2. Անհատի քաղաքական դերի վերաբերյալ ուսմունքները:
3. Անհատի քաղաքական ակտիվացման մակարդակները:
4. Անհատի քաղաքական ակտիվացման փուլերը:
5. Քաղաքական սոցիալիզացիա:
6. Քաղաքական սոցիալականացման փուլերը և մեխանիզմները:
7. Լիդերի (առաջնորդի) բնորոշ գծերը:
8. Քաղաքական լիդերի էությունը:
9. Քաղաքական լիդերի գործունեության մակարդակները:
10. Լիդերի ֆունկցիաները և տիպերը:
11. Քաղաքական լիդեր և էլիտա:

Փ62- Իրավագիտություն (2 կրեդիտ)

Առարկայի ուսումնական նպատակներն ու խնդիրները.

Իրավագիտությունն առարկայի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ իրավունքի և պետության ծագման, սոցիալական նորմերի հետ իրավանորմերի հարաբերակցության, պետության ձևի, կառուցվածքի, կառավարման ձևի, իրավունքի համակարգի, իրավահարաբերությունների, իրավունքի տարբեր ճյուղերի, այդ թվում սահմանադրական իրավունքի, ընտանեկան իրավունքի, միջազգային իրավունքի վերաբերյալ:

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.

Իրավագիտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Պետության հասկացությունը և էությունը: Իրավական պետությունը և նրա հիմնական բնութագրերը: Պետության տիպերը և ձևերը: Պետության մեխանիզմը: Պետության գործառույթները: Պետությունը հասարակության քաղաքական համակարգում:

Իրավունքի հասկացությունն ու էությունը: Իրավունքի ձևերը (աղբյուրները): Իրավունքը սոցիալական նորմերի համակարգում: Իրավագիտակցություն: Իրավունքի սկզբունքները և գործառույթները: Իրավունքի համակարգը: Օրինականություն և իրավակարգ:

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա.

1. հստակ պատկերացնել պետության և իրավունքի ծագման ընդհանուր օրինաչափությունները գործառույթները

2. ինքնուրույն կողմնորոշվել տարբեր տեսակետներում

3. որոշ տեսական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի.

1. իրավագիտության կարևորագույն խնդիրներին, առարկայի նպատակներին, նրա տեղին ու դերին

2. բուհում իրավագիտական կրթության կազմակերպման ժամանակակից մոտեցումներին և առանձնահատկություններին

3. բուն մասնագիտական գործնական կարողությունների

4. գնահատման գործիքներ կիրառելու հմտությանը

Թեմա 1. Պետության եվ իրավունքի առաջացումը

1. Պետության եվ իրավունքի առաջացման ու զարգացման մասին հիմնական տեսությունները:

2. Պետության առաջացման պատճառները:

3. Պետության հիմնական հատկանիշները:

4. Պետությունը որպես քաղաքական համակարգի հատուկ տարր:

5.

Թեմա 2. Պետության էությունը, գործառույթները եվ ձեվերը

1. Պետության էությունը:

2. Պետության գործառույթները:

3. Պետության ձեվ հասկացությունը:

4. Պետական կառավարման ձեվը:

5. Պետական կառուցվածքի ձեվերը:

6. Պետաիրավական վարչաձեվ:

Թեմա 3. Իրավունքը սոցիալական նորմերի համակարգում

1. Իրավունքի հատկանիշներն ու սահմանումը:

2. Իրավունքի աղբյուրները կամ ձեվերը:

3. Իրավունքը ժամանակակից ըմբռնմամբ:

Թեմա 4. Սոցիալական նորմերի հասկացությունը եվ տեսակները

6. Հասարակական նորմերի համակարգը:

7. Իրավունքի նորմեր:

8. Իրավահարաբերություններ հասկացությունը եվ նրա հիմնական հատկանիշները:

9. Իրավահարաբերության կառուցվածքը:

10. Իրավաբանական փաստեր:

Թեմա 5. Իրավունքը եվ իրավագիտակցությունը

1. Իրավագիտակցության հասկացությունը եվ տեսակները:

2. Իրավագիտակցության կառուցվածքը:

Թեմա 6. Օրինականությունը եվ իրավակարգը

1. Օրինականություն եվ իրավակարգ հասկացությունը:

2. Օրինականության սկզբունքները:

Թեմա 7. Իրավունքի համակարգը

1. Իրավունքի համակարգ հասկացությունը:
2. Իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերը:

Թեմա 8. Իրավական պետություն

1. Իրավական պետություն հասկացությունը:
2. Իրավական պետության բնութագրերը:
3. Իրավական պետության հիմնական հատկանիշները:
4. Իրավական պետության սկզբունքները:

Թեմա 9. Սահմանադրական իրավունք

1. Սահմանադրական իրավունքի առարկան ու աղբյուրները:
2. Սահմանադրական իրավունքի առարկան:
3. Սահմանադրաիրավական հարաբերություններ:
4. Հի սահմանադրական կարգի հիմունքները:

Թեմա 10. Սահմանադրական կարգ հասկացությունը

1. Պետական իշխանության կազմակերպման եվ գործունեության սահմանադրական սկզբունքները:
2. Պետության եվ անհատի փոխհարաբերության սահմանադրական հիմունքները:
3. Ժողովրդաիշխանության իրականացման ձևվերը:
4. Անմիջական ժողովրդավարություն:
5. Ներկայացուցչական ժողովրդավարություն:

Պ61Քաղաքական պատմություն

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ներկայացնել 20-րդ դարի առանցքային քաղաքական իրադարձությունների վերլուծությունը, որով պայմանավորվում է հասարակական առաջընթացը, քաղաքակիրթ հասարակության, քաղաքացու ձևավորումը: Քաղաքական պատմությունը մարդկային հասարակության ու ժողովուրդների ապրած քաղաքական կյանքի պատմությունն է, նրանց վարած քաղաքականության պատմությունը: Հասարակության քաղաքական կյանքի բովանդակությունն են կազմում դասակարգերի, սոցիալական խմբերի և նրանց կուսակցությունների պայքարը, հասարակական հոսանքներն ու գաղափարական ուղղությունները, հեղափոխությունները, պետական համակարգերը, նրանց ներքին և արտաքին քաղաքականությունը, միջպետական ու ազգամիջյան հարաբերությունները, համաշխարհային պատերազմները, արդի համաշխարհային իրադարձությունները:

Դասընթացի ուսումնասիրության վերջնարդյունքները

Դասընթացի ուսումնասիրության արդյունքում ուսանողտ պետք է գիտենա՝

1. Քաղաքական պատմության դասավանդման դերն ու նշանակությունը պատմական գործընթացի, հասարակական առաջադիմության հիմնախնդրի լուսաբանման գործում
2. 20-րդ դարում մարդկության ապրած քաղաքական կյանքը նրա խոշորագույն տեղաշարժերի, երևույթների, իրադարձությունների կտրվածքով, որոնք վճռական ներգործություն են ունեցել ժողովուրդների կյանքի ու պատմական ճակատագրերի վրա
3. հասարակական հոսանքների ու գաղափարական ուղղությունների, հեղափոխությունների, պետական համակարգերի, նրանց ներքին և արտաքին

քաղաքականության, միջպետական ու ազգամիջյան հարաբերությունների, 2 համաշխարհային պատերազմների քաղաքական հետևանքները :

Դասընթացի բովանդակությունը

ԹԵՄԱ 1. Առաջին համաշխարհային պատերազմը և նրա քաղաքական հետևանքները:

ԹԵՄԱ 2. Եվրոպական երկրների պետական կարգի և կուցակցական քաղաքական կառուցվածքի տեղաշարժերը 20-30-ական թվականներին: Ֆաշիզմ: ԹԵՄԱ 3. Երկրորդ աշխարհամարտը և նրա քաղաքական հետևանքները: ԹԵՄԱ 4. Քաղաքական երկու համակարգերի ձևավորումը երկրորդ աշխարհամարտից հետո: ԹԵՄԱ 5. Ամբողջատիրական համակարգի քայքայումը ԽՍՀՄ-ում: ԽՍՀՄ-ի փլուզումը: ԹԵՄԱ 6. Հյուսիս ատլանտյան դաշինքի կազմակերպությունը և Եվրատլանտյան համագործակցությունը: ԹԵՄԱ 7. Գունավոր հեղափոխությունները նախկին ԽՍՀՄ-ի տարածքում

Շաբաթական 1,5 ժամ (16 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար),

6-րդ կիսամյակ, ստուգարք

Մշակութաբանություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդակից դարձնել համաշխարհային մշակույթի զարգացման ընթացքին և առանձին իրողություններին, ներկայացնել համաշխարհային մշակույթի պատմությունը և վերջինիս համատեքստում հայ ազգային մշակույթի զարգացման առանձնահատկությունները, ուսանողին զինել համապատասխան մեթոդիկայով՝ ճանաչելու, վերլուծելու և գնահատելու մշակութային առանձին երևույթներ, օգնել մշակելու գնահատման ազգային, անհատական և համամարդկային չափանիշներ, ինչպես նաև դրսևորել ինքնուրույն մոտեցումներ մշակույթի և նրա առանձին դրսևորումների նկատմամբ:

Դասընթացի ուսումնասիրությունից հետո ուսանողը պետք է իմանա

մշակույթի բնորոշումը, ծագումը, զարգացման օրինաչափությունները, նյութական և հոգևոր մշակույթների առանձնահատկությունները, մշակույթի նեղ և լայն առումները

Պետք է կարողանա

ինքնուրույն տարբերակել հոգևոր և նյութական մշակույթները, նկատել նրանց փոխադարձ անցումները և տարրերի փոխներթափանցումները

ընտրել մշակութային իրողությունների գնահատման չափանիշները

ճանաչել մշակույթի զարգացման օրինաչափությունները

մշակույթի առանձին դրսևորումները պատկերացնել համաշխարհային մշակույթի զարգացման համատեքստում

ճանաչել և առանձնացնել լոկալ մշակույթների տիպերը (ըստ տարածքի, ժամանակաշրջանի, ազգայինի և մշակույթի տվյալ տիպի)

Պետք է տիրապետի

մշակութաբանության հետազոտական-վերլուծական հինգ մեթոդներին

Դասընթացի ծրագիր

Թեմա 1. Մշակութաբանության առարկան, խնդիրները, ուսումնասիրության շրջանակները

Մշակութաբանությունը իբրև գիտություն: Գիտությանը ներկայացվող պահանջները: Մշակութաբանության բաժինները: Մշակույթի տեսություն, տեսության առաջ քաշած հարցադրումները (մշակույթի ծագման նախադրյալները, զարգացման օրանաչափությունները և տեսական բնույթի այլ հարցադրումներ): Մշակույթի պատմություն: Ջարգացման փուլերը և պարբերակցման հիմքերը: Մշակութաբանության մեթոդոլոգիա: Հետազոտական հինգ մեթոդները (դիախորոնիկ, սինխորոնիկ, տիպաբանական, համակարգայնացման, ընկալման և բացահայտման):

Թեմա 2. Մշակույթի բնորոշումը

Բնորոշման պատմությունը և ասպեկտները: Սահմանման փորձերը և տարբեր տեսաբանների, փիլիսոփաների և մշակութաբանների մոտեցումները, դրանց քննական-համեմատական վերլուծությունը: Մշակութաբանների կարծիքների և մոտեցումների համադրումը (Ցիցերոն, Պուֆենդորֆ, Կանտ, Նիցշե, Ֆրեյդ և այլոք): Ընդհանուրը և մասնավորը մշակույթի տարբեր սահմանումների մեջ:

Թեմա 3. Մշակույթի գործառույթները

Մշակույթն իբրև սոցիալական երևույթ: Մշակույթի լայն և նեղ ըմբռումները: Գործառույթ և մշակութային գործառույթ հասկացությունները, վերջինիս առանձնահատուկ բնույթը: Մշակույթի ճանաչողական, միավորիչ, կարգավորիչ, արժեքաբանական և սոցիալիզացիոն գործառույթների վերլուծությունն ու արժևորումը: Դրանց պրակտիկ դրսևորումները անհատի և հասարակության կյանքում:

Թեմա 4. Մշակույթի լեզուն և կառուցվածքը: Ազգային և համամարդկային մշակույթ

Մշակույթի նյութական և հոգևոր բնույթը: Նյութական մշակույթի առանձնահատկությունները: Հոգևոր մշակույթի տարբերիչ գծերն ու առանձնահատկությունները: Նյութական և հոգևոր մշակույթների փոխադարձ անցումները և տարրերի համատեղումը: Դրանց միասնականացման պատճառներն ու նախադրյալները: Մշակույթի լեզվի հասկացությունը, նրա ձևավորման նախադրյալները: Բնական լեզուներ: Արհեստական լեզուներ: Բուն մշակույթի լեզուն իբրև դրանց յուրահատուկ համադրություն: Ազգայինը և համամարդկայինը մշակույթում:

Թեմա 5. Ջանգվածային և էլիտար մշակույթ

Ջանգվածային և էլիտար մշակույթ հասկացությունների ձևավորումն իբրև սոցիալ-պատմական երևույթներ: Դրանց առանձնացման հիմքերը և դրանց բնորոշման 3 տարբեր մոտեցումները: Ջանգվածային մշակույթի պատկերացումն ըստ անգլիացի և ամերիկացի տեսաբանների: Էլիտար մշակույթի բնութագրման և որակավորման չափանիշները: Մշակույթների հակադրումը և գնահատման չափանիշները: Գնահատման <<Գլոբ>> համակարգը, նրա առավելություններն ու սահմանափակությունները:

Թեմա 6. Հոգևոր գործունեության մշակութային ձևերը

Հոգևոր մշակույթի առանձնահատկությունները: Կրոն: Կրոնի ծագման նախադրյալները, կրոնի տարրերը (կրոնական զգացմունքներ, պատկերացումներ, գործողություններ): Կրոնի պատմական ձևերը նախնադարյան կրոնական հավատալիքներ, ազգային և համաշխարհային կրոններ: Կրոնն իբրև մշակույթի մաս: Արվեստ: Արվեստի գործառույթները: Արվեստի ծագման նախադրյալները: Արվեստի ծագման տեսությունները (ուստուլիտար, իմիտացիոն, խաղային և այլն): Գիտություն: Գիտության իբրև հոգևոր գործունեության

առանձնահատկությունները: Գիտություն և առանձին գիտակարգեր (դիսցիպլիններ): Գիտության ինտեգրման գործընթացները մշակույթի համակարգում:

Թեմա 7. Բնություն և մշակույթ

Բնությունն իբրև փիլիսոփայական և մշակութաբանական կատեգորիա: Բնությունն իբրև կեցության առանձին ձև յուրահատուկ մշակույթի կեցություն: Առաջին և երկրորդ բնություն (արհեստական միջավայր): Բնության առանձնահատկություններով պայմանավորված առանձին մշակութաբանական տեսությունների վերլուծությունը (<<Աշխարհագրական դետերմիզմ>>, <<Նոոսֆերա>>, <<արհեստական մշակույթների տեսություն>> և այլն) (Մոնտեսթյո, Վերնադսկի, Շպենգլեր և այլն):

Թեմա 8. Հասարակություն և մշակույթ

Հասարակության բնորոշումը: Հասարակությունն իբրև մշակույթի միակ ստեղծող, կրող և իմաստավորող (արժևորող): Հասարակությունն իբրև բնության ենթահամակարգ, հասարակությունների տիպերը: Մշակութային ժառանգորդման հասկացությունը: Հասարակությունը որպես մշակութային արժեքների փոխանցող և փոխանցման պատմական, սոցիալական, բարոյահոգեբանական, ազգային և համամարդկային հիմնավորումները:

Թեմա 9. Քաղաքակրթություն և մշակույթ: Արդի տեսությունները

Գաղափար քաղաքակրթության մասին: Նրա բնորոշումը: Քաղաքակրթություն և մշակույթի ընդհանրություններն ու տարբերությունները: Քաղաքակրթությունների զարգացման տարբեր մոտեցումներն ու մոդելները (շրջապատլստի, կրկնության, ծագման ու անհետացման, փոխազդեցության, հակադրության, մշակութային դիալոգի և այլ տեսություններ): Ժամանակակից մշակութաբանների՝ մշակույթի փիլիսոփայական իմաստավորման փորձերը՝ արդի սոցիալ-քաղաքական իրողությունների համատեքստում (Թոյնբրի, Շպենգլեր, Օրտեգա-ի-Գասետ և այլոք):

Համաշխարհային մշակույթի տեսություն և պատմություն

Առարկայի ուսումնական նպատակներն ու խնդիրները.

1) Ուսանողին զինել գիտելիքներով հայ ժողովրդի մշակույթի զարգացման առանձնահատկությունների, օրինաչափությունների վերաբերյալ պատմության զարգացման տարբեր փուլերում:

2) Խորացնել և ընդլայնել ուսանողի գիտելիքները՝ տեսական, պատմական և մշակութային հիմնախնդիրների շրջանակներում:

Ուսանողի գաղափար տալ ի՞նչ է մշակույթը, այն ուսումնասիրել որպես ազգային արժեք և թե պատմական առանձին ժամանակաշրջաններում ի՞նչ սկզբունքներ են հիմնային համարվել մշակույթի **Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.**

Հայ մշակույթի պատմության վերաբերյալ համապարփակ գիտելիքներ, կարողանա համեմատելու տարբեր ժողովուրդների մշակութային առանձնահատկությունները, հստակեցնել դասընթացի տեղն ու դերը համաշխարհային մշակույթի կոնտեքստում:

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա

Հստակորեն պարբերացնել պատմական ժամանակաշրջանները, հասարակական հարաբերությունները, կատարի վերլուծություններ, համեմատություններ հայ մշակույթի պատմության բոլոր հարցերի վերաբերյալ,

Մասնագիտական գիտելիքը նորացնելու և փոխանցել,

Նոր գաղափարներ առաջ քաշել,

Թիմում աշխատել

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի

Հայ մշակույթի պատմության կարևորագույն խնդիրներին, առարկայի նպատակներին, նրա տեղին ու դերին

Բուհում մշակութային կրթության կազմակերպման ժամանակակից մոտեցումներին և առանձնահատկություններին

Բուն մասնագիտական գործնական կարողությունների

Գնահատման գործիքների կիրառելու հմտությանը

Ծրագիր

Թեմա 1. Հայ մշակույթը Արարատյան թագավորությունում

ա) Գեղարվեստական արհեստագործություն

բ) Ճարտարապետություն

գ) Կրոն և հավատալիքներ

դ) Լեզուն և գիրը

Թեմա 2. Հայկական մշակույթը հելլենիզմի ժամանակաշրջանում (մ.թ.ա. 3-րդ դդ.)

ա) Հելլենիզմի դարաշրջանի հայկական մշակույթի բնույթն ու զարգացման ընթացքը:

բ) Ճարտարապետություն և քանդակագործություն:

գ) Գեղանկարչություն և կիրառական արվեստ:

դ) Հոգևոր մշակույթ (պաշտամունք և կրոն, գիր-գրականություն. հելլենիստական թատրոն):

Թեմա 3. Հայկական մշակույթը վաղ միջնադարում

ա) Վաղմիջնադարյան մշակույթի զարգացման բնույթն ու զարգացման հիմնական ուղիները:

բ) Հայոց գրի և դպրության սկզբնավորումը:

գ) Գրականություն և պատմագրություն:

դ) Գիտությունների զարգացումը (փիլիսոփայություն, իրավունք և դատավարություն, բնագիտություն):

ե) Արվեստ և ճարտարապետություն:

Թեմա 4. Հայկական մշակույթը (9-11-րդ դարեր)

ա) Մշակույթի նոր վերելք, դպրոց, կրթություն:

բ) Պատմագրություն և փիլիսոփայություն:

գ) Գեղարվեստական գրականություն:

դ) Արվեստ և ճարտարապետություն:

Թեմա 5. Հայ մշակույթը (12-14-րդ)

ա) Դպրոց և կրթություն:

բ) Պատմություն և իրավունք:

գ) Փիլիսոփայություն:

դ) Գեղարվեստական գրականություն:

ե) Արվեստ և ճարտարապետություն:

Թեմա 6. Հայկական մշակույթ (14-18-րդ)

ա) Դպրոց և մանկավարժություն:

բ) Փիլիսոփայություն:

գ) Գիտություն:

դ) Պատմագրություն:

ե) Գրականություն և երաժշտություն:

զ) Արվեստ և ճարտարապետություն:

Թեմա 7. Հայկական մշակույթը Նոր շրջանում (19-20-րդ դ. սկիզբ)

ա) Լուսավորություն, գիտություն, մամուլ:

բ) Գրականություն և արվեստ:

Թեմա 8. Հայկական մշակույթը 20-րդ դար (1920-40-ական թթ.)

ա) Մշակութային հեղափոխությունը Խորհրդային Հայաստանում:

բ) Խորհրդահայ գրականություն:

գ) Խորհրդահայ արվեստ:

դ) Միլիոնաչափ մշակույթ (դպրոց, մամուլ, գրականություն, թատրոն, երաժշտություն, կերպարվեստ):

Շաբաթական 1,5 ժամ (16 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար),

7-րդ կիսամյակ, ստուգարք

Կրթության սոցիոլոգիա

Նպատակը.

Ուսանողների մոտ կրթության սոցիոլոգիայի վերաբերյալ գիտելիքներ ձևավորել՝ ուղղված կրթության նկատմամբ հասարակական պահանջի պատմական աճին, վերջինիս տնտեսական պայմանավորվածությանը, սոցիոլոգիական հետազոտությունների դերի գնահատմանը կրթության բարեփոխման գործընթացում:

Բովանդակությունը

- Թեմա 1. Կրթության սոցիոլոգիայի առարկայական նկարագիրը
- Թեմա 2. Գրագիտություն, դպրոցական կրթության առաջացումը
- Թեմա 3. Կրթության հիմնական ձևերը
- Թեմա 4. Կրթության ինստիտուտի սոցիալական ֆունկցիաները
- Թեմա 5. Կրթության ֆունկցիաները մշակույթի ոլորտում
- Թեմա 6. Դպրոցական կրթության համակարգերի համեմատությունը արդյունաբերապես զարգացած երկրներում
- Թեմա 7. Բարձրագույն կրթություն. Միջազգային փորձի համեմատական վերլուծություն
- Թեմա 8. Կրթություն եւ անհավասարություն
- Թեմա 9. Կրթության ինստիտուտում կատարված հետազոտություններ
- Թեմա 10 Կրթության եւ տնտեսության կապը

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է իմանա

- կրթության սոցիոլոգիայի հիմնական տեսական բազային
- ունենա գիտելիքներ կրթության տարբեր ձևերի, դրանց պատմական փոփոխության մասին
- պետք է կարողանա գնահատել կրթության ինստիտուտը հասարակության այլ կառույցների հետ կապի տեսանկյունից
- ծանոթ լինի կրթության ոլորտում տարվող հետազոտությունների հիմնական ձևերին

Սոցիոլոգիա

Առարկա – Սոցիոլոգիա

Նպատակը.

Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել սոցիոլոգիայի պատմական անհրաժեշտության, հասարակության համար ունեցած դերի, սոցիոլոգիական աշխարհայացքի բազմազանության և բազմաձևության մասին

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է իմանա

1.Տեսական գիտելիքներ

- ✓ Սոցիոլոգիայի առաջացման պատմական անհրաժեշտության, վերջինիս ուսումնասիրման օբյեկտի, առարկայի, ֆունկցիաների, հիմնական խնդիրների, սոցիոլոգիական գիտելիքի բազմամակարդակ կառուցվածքի վերաբերյալ,
- ✓ Հասարակության պատմական տիպերի, զարգացման օրինաչափությունների, հիմնական ընդհանրությունների եւ տարբերությունների, համակարգային մոտեցման, հասարակության իբրեւ համակարգի՝ բազմամակարդակ կառուցվածքում գործառնող եւ փոխկախված տարրերի (անհատը՝ սոցիալական գործողություն կատարելու տեսանկյունից, խմբեր, կազմակերպություններ, ինստիտուտներ) վերաբերյալ,
- ✓ Հասարակության վերահսկողության մեխանիզմների, դրանց փոխալսման ավորվածության վերաբերյալ,
- ✓ Հասարակության ստրատիֆիկացիոն կառուցվածքի(շերտավորման), այն մեկնաբանող մոտեցումների, հիմնական շերտերի բնութագրի, մոբիլության, վերջինիս տեսակների, ըստ մոբիլության «բաց» եւ «փակ» հասարակությունների մեկնաբանման վերաբերյալ, գլոբալացման, վերջինս մեկնաբանող մոտեցումների եւ հիմնական տեսությունների (*իմպերիալիզմ (Հոբսոն), կախվածության տեսություն (Ֆրանկ), համաշխարհային համակարգի տեսություն (Վալերշտայն), ցանցային տեսություն (Կաստելլո)*), հոմոեական ակումբի, գլոբալ եւ գլոբալացնող ռիսկերի, ռիսկի հասարակության գաղափարի, գլոբալացման հիմնական գործիքների, աշխատուժի, տեխնոլոգիաների, կապիտալի հոսքերի, Մալթոսականության, Համահնչյունայնացման խնդրի, համաշխարհային հասարակության աճող բարդացման վերաբերյալ:
- ✓ Կիրառական սոցիոլոգիայի զարգացման պատմության, սոցիոլոգիական հետազոտության նախապատրաստման, անցկացման մշակման, ընդհանրացման ձևերի, հետազոտության հիմնական մեթոդների վերաբերյալ:

Բուն մասնագիտական գործնական կարողություններ

- ✓ Վերլուծելու, սինթեզելու,
- ✓ Կազմակերպելու, պլանավորելու,
- ✓ Քննադատության, ինքնաքննադատության,
- ✓ Տեղեկատվության կառավարման,
- ✓ Նոր տեղեկատվությունը համապատասխան համատեքստում քննալելու, մեկնաբանելու
- ✓ Բազմաձևության, բազմամշակութայնության ընդունման,
- ✓ Նոր գաղափարներ առաջադրելու
- ✓ Յուրացված գիտելիքը տրամաբանորեն եւ հետեւողականորեն ներկայացնելու,
- ✓ Առարկայի մեթոդները եւ տեխնոլոգիաները ճիշտ օգտագործելու,
- ✓ Տվյալ առարկայական ոլորտում հետազոտությունների արդյունքները գնահատելու կարողություններ:
- ✓ **Բովանդակությունը**
- ✓ **Թեմա 1.** Սոցիոլոգիան իբրև գիտություն

- ✓ 1. Սոցիոլոգիայի ձևավորման նախադրյալները:
- ✓ 2.Սոցիոլոգիական գիտելիքի կառուցվածքը:
- ✓ 3.Սոցիոլոգիայի ուսումնասիրման օբյեկտը, առարկան, մեթոդները, ֆունկցիաները:
- ✓ 4.Սոցիոլոգիական հետազոտության մեթոդները:
- ✓ 5.Սոցիոլոգիան հասարակական գիտությունների համակարգում:
- ✓ **Թեմա 2.** Հասարակություն
- ✓ 1.Հասարակության պատմական ձևեր և տիպաբանական հիմքեր:
- ✓ 2.Հասարակության զարգացումը մեկնաբանող մոտեցումներ:
- ✓ 2.1.Հասարակությունն իբրև համակարգ:
- ✓ **Թեմա 3.** Մշակույթ
- ✓ 1.<<Մշակույթ>> հասկացությունը, տարրերը, տեսակները:
- ✓ 2.Սոցիոմշակութային փոփոխություններ:
- ✓ **Թեմա 4.** Սոցիալականացում
- ✓ 1. Ընդհանուր հասկացություն, տեսակներ:
- ✓ 2. Առաջնային սոցիալականացումը մեկնաբանող մոտեցումներ:
- ✓ 3. Սոցիալականացման հիմնական ազեմտները:
- ✓ 4. Շեղվող վարք:
- ✓ **Թեմա 5.** Հասարակության սոցիալական կառուցվածքը
- ✓ 1. Սոցիալական խմբեր և կազմակերպություններ:
- ✓ 2. Սոցիալական ինստիտուտներ. ընտանիքի ինստիտուտը:
- ✓ **Թեմա 6.** Սոցիալական ստրատիֆիկացիա
- ✓ 1. Սոցիալական անհավասարություն, սոցիալական մոբիլություն, ստրատիֆիկացիոն դիրքեր, միջին դաս:
- ✓ 2. Ստրատիֆիկացիոն համակարգեր:
- ✓ 3. Սոցիալական ստրատիֆիկացիան մեկնաբանող դասական մոտեցումներ:
- ✓ Կրթական արդյունքները.

2.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

ԸՄԲ պարտադիր դասընթացներ

ԻՏՄՍ 61 - Ինֆորմատիկա (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ լաբորատոր)

1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել գիտելիքներ ինֆորմացիայի մշակման եղանակների, ԷՅՍ-երի կառուցվածքի ու նրանց աշխատանքի սկզբունքների վերաբերյալ, ուսուցանել ծրագրավորման սկզբունքներն ու ծրագրավորման լեզուներ (QBasic, TPascal):

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կյուրացնի ինֆորմացիայի մշակման ու կարգավորման տարբեր եղանակներ,
2. կկարողանա ինֆորմացիայի մշակման ու հաշվողական տարբեր պրոցեսների իրականացման և խնդիրների լուծման համար մշակել և կիրառել գծային, ճյուղավորվող և ցիկլիկ կառուցվածքի տարբեր ալգորիթմներ, կազմել համապատասխան ծրագրեր ու կատարել տարբեր հաշվարկներ ԷՅՍ-երի վրա:
3. կկարողանա աշխատել էլեկտրոնային աղյուսակների հետ:

ԻՏՄՍ 62 - Ծրագրավորման լեզուներ (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (16 ժամ դասախոսություն, 14 ժամ լաբորատոր)

2-րդ կիսամյակ, ստուգաթղթ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է խորացնել ուսանողների գիտելիքները ծրագրավորման լեզուներից՝ ուսուցանելով նրանց Պասկալ ծրագրավորման լեզուն: Ծրագրավորման Պասկալ լեզվի բնագավառում ձեռք բերված գիտելիքները կիրառել պրակտիկ ծրագրավորման մեջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

1. Կազմել գծային, ճյուղավորվող և ցիկլիկ ալգորիթմով տարբեր բնույթի խնդիրների ծրագրեր
2. Կազմել ենթածրագրեր ֆունկցիաների և պրոցեդուրաների տեսքով և օգտվել դրանցից
3. Ձևավորել ֆայլեր և աշխատել դրանց հետ

Բովանդակությունը.

Թեմա 1.: Ծրագրավորման Պասկալ լեզվի այբուբենը և հիմնական միջոցները:
Թեմա 2. Մունքի և ելքի հրամանները Պասկալ լեզվում: Թեմա 3. Պայմանի և անցման հրամանները Պասկալ լեզվում: Թեմա 4. Ցիկլի հրամանները Պասկալ լեզվում: Թեմա 5. Ֆայլերի ձևավորումը Պասկալ լեզվում: Թեմա 6. Ֆունկցիաները և պրոցեդուրաները Պասկալ լեզվում: Թեմա 7. Կազմել ծրագրեր Պասկալ ծրագրավորման լեզվով:

ԻՏՄՍ 62 - Ծրագրավորման լեզուներ (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (16 ժամ դասախոսություն, 14 ժամ լաբորատոր)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Նպատակը

Առարկայի դասավանդման նպատակն է ուսանողներին ծանոթացնել ժամանակակից քոմպիյութերային լեզուների, նրանց առանձնահատկությունների և կիրառման բնագավառների հետ: Առարկայի ուսումնասիրության արդյունքում ուսանողը պետք է ձեռք բերի տարբեր ալգորիթմական լեզուներով ծրագրավորման գիտելիքներ, ունակություններ տվյալ խնդրի լուծման համար առավել արդյունավետ քոմպիյութերային լեզու ընտրելու և նրանով ծրագրավորելու տարբեր տիպի կիրառական խնդիրներ: Ուսուցումը զուգակցվում է անհատական քոմպիյութերների վրա լաբորատոր աշխատանքների կատարմամբ և պրակտիկ խնդիրների լուծմամբ:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը

1. ձեռք կբերի գիտելիքներ ծրագրավորման եղանակների և քոմպիյութերի վրա ծրագրերի կատարման սկզբունքների վերաբերյալ: Գաղափար կկազմի մեքենայական և սիմվոլիկ կոդավորման լեզուների մասին: Գաղափար կկազմի ալգորիթմական (քոմպիյութերային) լեզուների մասին, նրանց նշանակությունը և տեսակներն ըստ կիրառության և կողմնորոշման: Ծրագրավորման լեզուների դասակարգումը: Կառուցվածքային և օբյեկտային կողմնորոշված լեզուները, նրանց առանձնահատկությունները և կիրառման բնագավառները: Արհեստական ինտելեկտի լեզուներ:

2. ձեռք կբերի գիտելիքներ Pascal լեզվի հիմնական գաղափարների մասին

3. ձեռք կբերի գիտելիքներ Pascal լեզվի զանգվածների, գրառումների, տողերի և բազմությունների մասին, նրանց կիրառությունը:

5. ձեռք կրերի գիտելիքներ Pascal լեզվի Ֆայլերի, պրոցեդուրաների, ֆունկցիաների և մոդուլների մասին Պասկալ լեզվում, նրանց նշանակությունը և կիրառությունը:

Բովանդակությունը

թեմա 1 Ծրագրավորման լեզուներն ու նրանց դասակարգումը: Ծրագրավորման մակարդակներ: Թարգմանիչ ծրագրեր (կոմպիլատորներ և ինտերպրետատորներ), ծրագրի թարգմանության հիմնական էտապներ, Սկզբնական ծրագրի վերլուծություն, օբյեկտ ծրագրի սինտեզում:

թեմա 2 Turbo PASCAL լեզվի հիմնական հասկացությունները և գաղափարները: Անուններ (իդենտիֆիկատորներ), թվեր, տողեր, հաստատունները, ստանդարտ ֆունկցիաներ և արտահայտություններ: Ծրագրի կառուցվածքը Turbo PASCAL լեզվում: Գործողությունները(բինար և ունար) Turbo PASCAL լեզվում:

թեմա 3 Տվյալների տեսակները և նրանց ըմբռնումը Turbo PASCAL լեզվում: Տվյալների ստանդարտ (integer, real, boolean, char, թվարկվող և տիպ-միջակայք) տիպերը և նրանց հետ գործողությունները Turbo PASCAL լեզվում: Պարզ, կառուցվածքային(բարդ) և կարգային տիպերը Turbo PASCAL լեզվում: Տվյալների ներածման և արտածման, անցման, ընտրության և կրկնության օպերատորները օպերատորները Turbo PASCAL լեզվում:

թեմա 4 Զանգվածները Turbo PASCAL լեզվում:

թեմա 5 Բազմություններ և բազմություն տիպը Turbo PASCAL լեզվում: Տողերը և տող տիպը Turbo PASCAL լեզվում: Տվյալների կազմակերպումը գրառումների համախմբության ձևով: Կոմբինացված տիպը Turbo PASCAL լեզվում: Վարիանտա դաշտերով գրառումներ, With օպերատորը:

թեմա 6 Ֆայլային տիպը Turbo PASCAL լեզվում: Ֆայլերը և նրանց առաջնայնացումը Turbo PASCAL լեզվում: Տրամաբանական սարքերը և նրանց կապակցումը ֆայլային փոփոխականին: Տեքստային ֆայլերը Turbo PASCAL լեզվում: Տիպայնացված և ոչ տիպայնացված ֆայլերը Turbo PASCAL լեզվում: Ֆայլերի հետ աշխատանքի ֆունկցիաները ու պրոցեդուրները Turbo PASCAL լեզվում:

թեմա 7 Բլոկային ծրագրավորում, լոկալ և գլոբալ փոփոխականներ: Ֆունկցիաները և պրոցեդուրները Turbo PASCAL լեզվում: Մոդուլները և նրանց կառուցվածքը Turbo PASCAL լեզվում: Ստանդարտ մոդուլները Turbo PASCAL լեզվում:

Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 12 գործնական, 12 ժամ լաբորատոր)

8-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսումնասիրել երկնային մարմինների, դրանց համակարգերի շարժումները, կառուցվածքը, բաշխումը, ծագումը, էվոլյուցիան և զարգացումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա երկնային մարմինների հատկությունները, կառուցվածքը և դրանց վարքը կարգավորող հիմնական օրենքները,
2. կիսկանա աստղագիտության առանձնահատկությունը, խորքային կապը ֆիզիկայի և մաթեմատիկայի հետ,
3. կկարողանա ճանաչել երկնային մարմինների հիմնական տեսակները և ուսումնասիրել տարաբնույթ հարցեր օգտվելով համապատասխան գրականությունից

Առարկայի բովանդակությունը.

Թեմա 1. Ներածություն: **Թեմա 2.** Ոլորտային աստղագիտության տարրերը: **Թեմա 3.** Արեգակնային համակարգի կառուցվածքը: **Թեմա 4.** Երկնային մեխանիկայի տարրերը: **Թեմա 5.** Աստղագիտության մեթոդները և գործիքները: **Թեմա 6.** Արեգակ: **Թեմա 7.** Աստղեր: **Թեմա 8.** Մեր Գալակտիկան: **Թեմա 9.** Արտագալակտիկ աստղագիտության տարրերը: **Թեմա 10.** Հայ աստղագիտական մտքի նվաճումները:

ԿևՖ 51 - Տարիքային ֆիզիոլոգիա (2 կրեդիտ)

Շաբաթական 1,5 ժամ (16 ժամ դասախոսություն, 8 ժամ լաբորատոր)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ֆիզիոլոգիայի հիմունքներին, նրանց գիտելիքներ տալ նյարդային համակարգի, գլխուղեղի բարձրագույն ֆունկցիաների և մարդկային օրգանիզմի այլ համակարգերի ֆունկցիաների և գործունեության վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիսկանա մարդու օրգանիզմի կառուցվածքի յուրահատկությունները,
2. կտիրապետի մարդկային օրգանիզմի տարբեր համակարգերի ֆունկցիաների և գործունեության վերաբերյալ գիտելիքների:

Բովանդակությունը.

Թեմա-1 Նյարդային համակարգի ֆիզիոլոգիան և տարիքային առանձնահատկությունները: Թեմա-2 Գլխուղեղի բարձրագույն ֆունկցիաները և նրանց տարիքային առանձնահատկությունները: Թեմա-3 Ձգայական համակարգերի ֆիզիոլոգիա: Թեմա-4 Ներզատիչ գեղձերի ֆիզիոլոգիան և տարիքային առանձնահատկությունները: Թեմա-5 Արյան համակարգի ֆիզիոլոգիան և տարիքային առանձնահատկությունները: Թեմա-6 Սիրտ-անոթային համակարգի ֆիզիոլոգիական և տարիքային առանձնահատկությունները: Թեմա-7 Շնչառության համակարգի ֆիզիոլոգիական և տարիքային առանձնահատկությունները: Թեմա-8 Արտազատության համակարգի ֆիզիոլոգիական և տարիքային առանձնահատկությունները:

ԲԱ 51 - Էլոկոգիա և բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ)

Շաբաթական 1,5 ժամ (16 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել բնապահպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերին, օգնել նրանց հասկանալու արդի ժամանակաշրջանի բնապահպանական հիմնախնդիրները, ճիշտ կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ձեռք բերել համակարգված գիտելիքներ բնության, մարդու և հասարակության էկոլոգիական փոխհարաբերությունների, ժամանակակից էկոլոգիական հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ:
2. կսովորի բնությանը վերաբերվել որպես կարևորագույն կենսական և բարոյագեղագիտական արժեքի, կդրսևորի էկոլոգիապես նպատակահարմար վարք և գործունեություն,
3. կկարողանա վերլուծել էկոլոգիական իրավիճակների առաջացման պատճառները, ընտրել էկոլոգիական հիմնախնդիրների լուծման այլընտրանքային եղանակներ:

Բովանդակությունը.

Թեմա-1 Բնապահպանության մեթոդոլոգիան և գիտական հիմունքները:

Բնապահպանության և բնօգտագործման օրենքներն ու կանոնները, հիմնական

սկզբունքները: Հասկացություն կենսոլորտի մասին: Թեմա-2 ՀՀ-ան հողային

ռեսուրսները և օգտագործումը: Հողերի պահպանումը երոզիայից, աղակալումից,

ճահճացումից, քիմիական աղտոտումից: ՀՀ-ան ջրային ռեսուրսները և օգտագործումը: Ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրները և պահպանման միջոցառումները: Հոսքաջրերի մաքրման մեթոդները: Թեմա-3 Բուսականության պահպանման և արդյունավետ օգտագործման խնդիրները: Հայաստանի բուսականության «Կարմիր գիրքը»: Կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության խնդիրները: Սթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները: Թեմա-4 Արտակարգ իրավիճակներ: Բնութագրումը, դասակարգումը և կանխարգելման ուղիները: Էկոլոգիական աղետները: Բնակոլոգիական գործոնների ազդեցությունը մարդու առողջության վրա: Էկոլոգիական մոնիտորինգ: Ազրոէկոլոգիական մոնիտորինգ: Շրջակա միջավայրի աղտոտումը և թափոնների հիմնախնդիրը: Մաքուր ջրի հիմնախնդիրը: Կենսաբազմազանության կորուստը: Մարդու առողջության էկոլոգիական հիմնախնդիրը:

Բժշկ 51-Քաղաքաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր (3 կրեդիտ)

Շաբաթական 2,5 ժամ (16 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

4-րդ կիսայակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցներին, սովորեցնել բնական աղետների և վթարների դեպքում բնակչության պաշտպանության եղանակները, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման ուղիները և եղանակները, խոցման օջախում և բնական աղետների ու վթարների հետևանքների վերացման ժամանակ վթարա-փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների կազմակերպման և կատարման հիմունքները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բնակչության և քաղաքացիական պաշտպանության հիմունքները,
2. կտիրապետի հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցներից, բնական աղետներից և վթարներից բնակչության պաշտպանության եղանակներին ու միջոցներին,
3. կկարողանա պարապմունքներ կազմակերպել և իրականացնել հանրակրթական դպրոցների ցածր դասարանների աշակերտների հետ:

Բովանդակությունը.

Թեմա-1 Արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության կառավարման պետական միասնական համակարգը, իրավական նորմատիվ բազան: Թեմա-2 Արտակարգ իրավիճակները, նրանց դասակարգումը, բնութագրերը, կանխարգելման և բնակչության պաշտպանության ուղիները: Թեմա-3 Հարձակման ժամանակակից զանգվածային և սովորական միջոցները: Թեմա-4 Քիմիական վարակման օջախները և քիմիական իրադրության գնահատման մեթոդները:

Թեմա-5 ճառագայթային վարակման օջախները և ճառագայթային իրադրության գնահատումը: Թեմա-6 ԱԻ և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության հիմնական եղանակները, ձևերը և միջոցառումների կազմակերպումը: Թեմա-7 ԱԻ ռիսկի գնահատումը: Թեմա-8 ԱԻ և ՔՊ պլանների կազմման հարցերը: Թեմա-9 ԱԻ օպերատիվ միջոցառումների կազմակերպումը:

ԻՏՄՍ - Համակարգիչների կիրառումը ուսումնական պրոցեսում

Շաբաթական 2 ժամ (32 ժամ լաբորատոր)

6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը

“Համակարգչի կիրառությունը ուսումնական պրոցեսում” դասընթաց է, որում ընդգրկված են ոչ միայն ժամանակակից տեխնիկական միջոցների և դիդակտիկ նյութերի համախմբությունը, որը նրա օպտիմալացման նպատակով կիրառվում է ուսումնակրթական գործընթացում, այլ նաև ամբողջական շարք հոգեբանա-դիդակտիկ բնույթի նորամուծություններ, որոնք ծառայում են ուսանողների կողմից ծրագրային նյութի ավելի արդյունավետ յուրացմանը:

Կրթական արդյունքները.

“Համակարգչի կիրառությունը ուսումնական պրոցեսում” դասընթացը սովորողների համար հնարավորություն է ստեղծում ձեռք բերել՝

1. Տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, ընտրելու, հավաքելու, ուսումնասիրելու և դասակարգելու կարողություն:
2. Ուսուցան տեղեկատվությունն ու ծրագրերը պատասխանատվությամբ օգտագործելու կարողություն:
3. Ուսումնառության մակարդակը բարձրացնելու, արդյունավետությունը մեծացնելու եւ ստեղծագործական մոտեցումը խթանելու նպատակով Համակարգչը կիրառելու կարողություն:
4. Իրական կյանքում խնդիրներ լուծելու եւ դրանց ռազմավարությունների զարգացման, ինչպես նաև տեղեկացված որոշումներ կայացնելու համար Համակարգչ կիրառելու կարողություն:

Դասընթացի կառուցման և լաբորատոր մասի ցուցադրական պրեզենտացիաների կազման ընտրության ժամանակ հաշվի է առնվում ուսանողների մասնագիտական կողմնորոշումը:

Բովանդակությունը

Թեմա 1. Համակարգիչ (սարքաշար-hardware): Թեմա 2. Windows՝ օպերացիոն համակարգի թողարկումը: Թեմա 3. Ենթատեքստային մենյու, գրաֆիկական նիշերի դասավորումը: Թեմա 4. Ms Word ծրագրի պատուհանը: Թեմա 5. Microsoft Excel:

Բժշկ 52-Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանում (3կրեդիտ)

Շաբաթական 2,5 ժամ (16 ժամ դասախոսություն, 16 ժամ գործնական, 8 լաբորատոր),

3-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ տալ, որոնք անհրաժեշտ են հիվանդին (տուժածին) առաջին օգնություն ցուցաբերելու, ինչպես նաև առողջ ապրելակերպի համար: Առարկան նպատակ ունի ուսանողներին գիտելիքներ տալ վերակենդանացման ու ցավազրկման, առողջ ապրելակերպի մասին, այն գործողությունների մասին, որոնք անհրաժեշտ են առաջին օգնություն ցուցաբերելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
2. կարողանա ճանաչել և գնահատել արտակարգ իրավիճակներ,
3. կսովորի ճիշտ և արագ գործել շտապ դեպքերում, ժամանակին ձեռնարկել հմուտ գործողություններ:

Բովանդակությունը.

Թեմա-1 Միզասեռական համակարգի հիվանդություններ՝ ցիստիտ, նեֆրիտ, միզաքարային հիվանդություն: Միզասեռական համակարգի հիվանդությունով հիվանդի խնամքը: Թեմա-2 Ներզատական համակարգի հիվանդություններ՝ շաքարային դիաբետ, էնդեմիկ խալիպ: Արյան շրջանառության վրա ներգործող միջոցներ: Թեմա-3 Առաջին օգնությունը սուր փսիխոզի, հիստերիայի և էպիլեպսիայի նոպայի ժամանակ: ՄԻԱՎ / ՁԻԱՀ: Թեմա-4 Կենցաղային թունավորումներ, առաջին օգնությունը: Օձի և կարիճի խայթոցներ, առաջին

օգնությունը: Բուժքրոջ (եղբոր) պարտականությունները: Թեմա-5 Գլխի, պարանոցի և ողնաշարի վնասվածքներ: Թեմա-6 Կրծքավանդակի վնասվածքներ, առաջին օգնությունը: Որովայնի և կոնքի խոռոչի վնասվածքներ, առաջին օգնությունը: Թեմա-7 Կոմբինացված և համակցված վնասվածքներ, առաջին օգնությունը: Վնասվածքային շոկ, հակաշոկային միջոցառումներ: Թեմա-8 Վերքային ինֆեկցիա: Պայքարի միջոցները: Հականեխտություն և աննեխտություն: Վիրակապություններ: Թեմա-9 Այրվածքներ: Ցրտահարում: Էլեկտրահարում: Ջրահեղձում: Առաջին օգնությունը այդ վնասվածքների ժամանակ: Թեմա-10 Վերակենդանացում և ցավազրկում: Երկարատև ճնշման համախտանիշ, առաջին օգնությունը: Թեմա-11 Ոսկրերի կոտրվածքներ, առաջին օգնությունը: Հիվանդների և վիրավորների տեղափոխումը:

2.3 Ընդհանուր մասնագիտական կրթամաս

ՄԱ 60.1- Մաթեմատիկական անալիզ 1 (7 կրեդիտ)

*Շաբաթական 5.5 ժամ (40 ժամ դասախոսություն, 48 ժամ գործնական),
1-ին կիսամյակ, քննություն*

Նպատակը.

Մաթեմատիկական անալիզի նպատակն է փոփոխական մեծությունների և երևույթների որակական և քանակական ուսումնասիրությունը, նրանց միջև կապերի հետազոտումը և լուծումը, սահմանի, լրիվության, անընդհատության և ածանցյալի գաղափարների ծանոթացումը և նրանց կիրառությունը բնագիտական տարբեր խնդիրների լուծման ժամանակ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա հաշվել սահմաններ, ազատվել անորոշություններից
2. կկարողանա գործողություններ կատարել անվերջ փոքրերի և մեծերի հետ, հասկանալ անընդհատությունը, դասակարգել խզման կետերը:
3. կկարողանա հաշվել ածանցյալ, դիֆերենցիալ և հաշվումներ կատարել Թեյլորի բանաձևով
4. կկարողանա կատարել ֆունկցիայի լրիվ հետազոտում, կառուցել գրաֆիկներ, գտնել ֆունկցիայի գրաֆիկի շոշափողը, նորմալը, կորի երկարության դիֆերենցիալը, կորության շառավիղը

Բովանդակությունը

Թեմա 1. Անալիզի ներածություն: Թեմա 2. Մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ հաշիվ: Թեմա 3. Անորոշ ինտեգրալ:

ՄԱ 60.2- Մաթեմատիկական անալիզ 2 (7 կրեդիտ)

*Շաբաթական 5.5 ժամ (40 ժամ դասախոսություն, 48 ժամ գործնական),
2-րդ կիսամյակ, քննություն*

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներմուծել նախնականի գաղափարը, անորոշ և որոշյալ ինտեգրալների հասկացությունները, պարզել նրանց իմաստը, ուսանողների մոտ ձևավորել կարողություններ ինտեգրալների, շատ փոփոխականների դիֆերենցիալ հաշվի կիրառությունների վերաբերյալ էքստրեմալ խնդիրների լուծումների ինչպես նաև ֆունկցիայի աստիճանային շարքի վերլուծման, շարքերի հավասարաչափ զուգամիտության նկատմամբ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա հաշվել անորոշ ինտեգրալներ, կիրառել Նյուտոն-Լայբնիցի բանաձևը որոշյալ ինտեգրալի միջոցով հաշվելու մակերեսներ, ծավալներ, ծանրության կենտրոններ, իներցիայի մոմենտներ
2. կկարողանա հաշվել շատ փոփոխականի ֆունկցիաների ածանցյալներ, դիֆերենցիալներ, լուծել էքստրեմումի խնդիրներ Լագրանժի մեթոդով, գտնել շոշափող հարթության և նորմալի հավասարումները, մակերևույթի Գաուսի գործակիցները
3. կկարողանա ուսումնասիրել դրական անդամներով և նշանափոխ թվային շարքերի զուգամիտությունը Դալամբերի, Կոշու ինտեգրալի և Լայբնիցի հայտանիշների միջոցով
4. կկարողանա գտնել աստիճանային շարքերի զուգամիտության շարքերը, կհասկանա շարքի հավասարաչափ և պայմանական զուգամիտությունը
5. կկարողանա ինտեգրել և դիֆերենցել ֆունկցիոնալ շարքերը

Բովանդակությունը

Թեմա 1. Որոշյալ ինտեգրալ: Թեմա 2. Թվային շարքեր: Թեմա 3. Ֆունկցիոնալ շարքեր: Թեմա 4. Մի քանի փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ հաշիվ:

ՄԱ 60.3- Մաթեմատիկական անալիզ 3 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (24 ժամ դասախոսություն, 40 ժամ գործնական),

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է պարզաբանել, կրկնակի, եռակի, մակերևութային և կորագիծ ինտեգրալների մաթեմատիկական իմաստը, նրանց գոյության պայմանները և իրար հետ կապի ձևերը: Ուսանողների մոտ ձևավորել նշված ինտեգրալների ֆիզիկական և երկրաչափական կիրառությունների կարողություններ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա կատարել փոփոխականի փոխարինումներ կրկնակի, եռակի, մակերևութային և կորագիծ ինտեգրալներում, հաշվել յակոբյանը, անցնել բևեռային և գլանային կոորդինատների
2. կկարողանա արտածել Գրինի, Օստրոգրադսկու, Գաուսի, Ստոքսի բանաձևերը և կիրառել այն ֆիզիկայի խնդիրների լուծման նկատմամբ
3. կկարողանա ինտեգրմամբ որոշել մակերևութի մակերեսը, կորի երկարությունը, ծանրության կենտրոնի կոորդինատները և կիրառել Գալիլեյի թեորեմը

Բովանդակությունը

1. Թեմա 1. Մի քանի փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ հաշիվ: Թեմա 2. Կրկնակի և եռակի ինտեգրալներ: Թեմա 3. I և II սեռի կորագիծ ինտեգրալներ: Թեմա 4. I և II սեռի մակերևութային ինտեգրալներ :

ԵՅ 60- Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ (3 կրեդիտ)

Շաբաթական 2.5 ժամ (16ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական),

1-ին կիսամյակ, ստուգաբաժնի

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել վերլուծական երկրաչափության և գծային հանրահաշիվի ուսումնասիրման մեթոդներին, դասընթացում ուսումնասիրվող հիմնական հարցերին, որը ուսանողներին հնարավորություն կտա խորությամբ յուրացնելու մասնագիտական և հարակից առարկաները (վեկտորական և թենզորական անալիզ, մաթեմատիկական անալիզ, մեխանիկա, ֆիզիկա և հարակից մասնագիտական այլ առարկաներ):

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա վերլուծական երկրաչափության և գծային հանրահաշվի ուսումնասիրման մեթոդները, բովանդակության հարցերը:
2. կհասկանա ինչպես կիրառել վեկտորական և կորորդինատային մեթոդները խնդիրներ լուծելիս երկրաչափության բաժինը ուսումնասիրելու ընթացքում ինչպես նաև գծային հավասարումների համակարգերի լուծումները գտնելու մեթոդները:
3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը

Թեմա 1. Վեկտորական հանրահաշվի տարրերը, վեկտորական և խառը արտադրյալները, II, III կարգի դետերմինանտներ: Թեմա 2. Երկրաչափությունը հարթության վրա և տարածության մեջ: Ուղղի և հարթության երկրաչափությունը: Թեմա 3. II կարգի կորերի կանոնական տեսությունը: Կորի ընդհանուր հավասարման պարզեցումը: II կարգի մակերևույթների կանոնական տեսությունը, շոշափող հարթությունները: Թեմա 4. Կոմպլեքս թվերի տեսությունը: Գծային հավասարումների համակարգերի լուծումը և հետազոտումը: Մատրիցները, դետերմինանտներ: Կրամերի կանոնը: Գծային տարածություններ: Գծային օպերատորներ: Գծային օպերատորի սեփական արժեքները և վեկտորները:

ԵՅ 60- Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ (4 կրեդիտ)

*Շաբաթական 3 ժամ (24 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական),
2-րդ կիսամյակ, քննություն*

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել վերլուծական երկրաչափության ուսումնասիրման մեթոդներին և դասընթացում ուսումնասիրվող հիմնական հարցերին , որը կօգնի խորությամբ յուրացնելու մասնագիտական և հարակից առարկաները(հանրահաշվ, մաթեմատիկական անալիզ և այլ առարկաներ) :

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա վերլուծական երկրաչափությունում կիրառվող վեկտորական և կորորդինատային մեթոդները, բովանդակությունում ներառված հարցերը:
2. կհասկանա ինչպես կիրառել վեկտորական և կորորդինատային մեթոդները խնդիրների լուծելիս:
3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը

Թեմա 1. Վեկտորական հանրահաշվի տարրերը հարթության վրա և տարածության մեջ: Կոորդինատների մեթոդը հարթության վրա և տարածության մեջ: Վեկտորների սկալյար, վեկտորական և խառը արտադրյալները: Թեմա 2. Ուղիղ գծի տեսությունը հարթության վրա: Ուղիղը և հարթությունը տարածության մեջ: Երկրաչափական ձևափոխությունները հարթության վրա: Թեմա 3. Ու կարգի կորերի կանոնական տեսությունը: Ու կարգի կորերի ընդհանուր տեսության հիմնական հարցերը:

ՄԱ 61- Դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումներ (5 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական),
3-րդ կիսամյակ, քննություն*

Նպատակը.

Դասընթացի նպատակն է դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումների լուծման մեթոդների ուսումնասիրությունը և նրանց կիրառումը բնագիտական, մասնավորապես ֆիզիկայի որոշակի խնդիրների լուծման նկատմամբ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումների լուծման մեթոդները
2. կկարողանա դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումները կիրառել խնդիրների լուծման նկատմամբ

Բովանդակությունը

Թեմա 1. Մետրիկական տարածություն: Լրիվություն: Անընդհատ ֆունկցիաների C տարածությունը: Բանախի թեորեմը սեղմող արտապատկերման մասին: Դիֆերենցիալ հավասարումներ: Լուծման գոյության և միակության թեորեմը: Թեմա 2. Առաջին կարգի դիֆերենցիալ հավասարումներ: Թեմա 3. Հաստատուն գործակիցներով երկրորդ կարգի գծային դիֆերենցիալ հավասարումներ: Թեմա 4. Հաստատուն գործակիցներով երկրորդ կարգի գծային դիֆերենցիալ հավասարումներ: Թեմա 5. Դիֆերենցիալ հավասարումների նորմալ համակարգեր: Թեմա 6. Ինտեգրալ հավասարումներ: Ֆրեդհոլմի, Վոլտերայի և Աբելի ինտեգրալ հավասարումները:

ՄԱ 62- Սաթենատիկական ֆիզիկայի հավասարումներ (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ֆիզիկայի մաթեմատիկական ապարատի յուրացումը և կիրառումը հիդրոմեխանիկայի, առաձգականության տեսության, էլեկտրադինամիկայի, ջերմահաղորդականության, տատանողական շարժման խնդիրների լուծման նկատմամբ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա արտածել լարի տատանման և ջերմահաղորդականության հավասարումները,
2. կկարողանա մաթֆիզ հավասարումները դասակարգել էլիպտական, հիպերբոլական և պարաբոլական տեսքերի
3. կկարողանա լուծել լարի տատանման հավասարումը Դալանբերի և Ֆուրյեի մեթոդներով
4. կհասկանա հարմոնիկ ֆունկցիաների իմաստը, նրանց հատկությունները, մաքսիմումի սկզբունքը, Պուլասոնի կորիզը, Գրինի կորիզը, լուծել Դիրիխլեի և Նեյմանի խնդիրները շրջանում և գնդում
5. կկարողանա լուծել ջերմահաղորդականության հավասարումը ուղղի և հարթության վրա
6. կտիրապետի մաթֆիզ հավասարումների լուծման համակարգչային Matlab ծրագրային մեթոդին

Բովանդակությունը

Թեմա 1. Մասնական ածանցյալներով II կարգի հավասարումների դասակարգում: Թեմա 2. Հիպերբոլական տեսակի հավասարումներ: Թեմա 3. Պարաբոլական տեսակի հավասարումներ: Թեմա 4. Էլիպսային տեսակի հավասարումներ:

ՄԱ 63- Կոնայեքս փոփոխականի ֆունկցիաներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2.5 ժամ (16 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ընդլայնել թվի գաղափարը ուսանողների մոտ, պարզաբանել անալիտիկ ֆունկցիաների առանձնահատկությունները և ցույց տալ նրանց կապը մեխանիկայի և ֆիզիկայի խնդիրների հետ,

կիրառել կոմպլեքս անալիզի բնագավառում ձեռք բերած գիտելիքները և ունակությունները հիդրո և աերո դինամիկայի, առաձգականության էլեկտրադինամիկայի խնդիրներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա նույն կոմպլեքս թիվը տարբեր տեսքերով արտահայտելը,
2. կհասկանա և գաղափար կունենա կոմպլեքս փոփոխականի տարրական ֆունկցիաներով իրականացվող արտապատկերումների մասին ,
